



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ (31 դեկտեմբերի, 2011 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալ ժողովուրդ.

Տարեմուտի բարի մաղթանքներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եմ Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ի Հայաստան եւ ի Սփյուռք:

Նոր հույսերով ու ակնկալիքներով դիմավորում ենք 2012 թվականը: Ամանորի սեմին առատացնում ենք նաեւ մեր աղոթքները՝ սպասելով մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան բարի ավետիսին, որն ամեն նոր տարվա հետ լցնում է աշխարհը երկնային շնորհներով եւ բերում պատգամը խաղաղության եւ մարդկանց մեջ սիրո ու համերաշխության:

Տիրոջ ողորմությամբ 2011 թվականը խաղաղ տարի եղավ մեր ժողովրդի համար: Պաշտպանված եղան մեր երկրի սահմանները, մեր եկեղեցիներից գոհաբանական աղոթք բարձրացավ երկինք: Հայրենիքում եւ Սփյուռքում մեր ժողովուրդը ջանաց իր կյանքի բարեկամն ու ապահովության համար: Վաղվա լուսավոր օրը կերտելու վստահությամբ դիմագրավեց մեր կյանքում դեռեւս առկա դժվարություններին, համբերեց նեղությունների մեջ, ապրեց ու ստեղծեց, իր իղծերը մարմնավորելու տեսիլքով ու կամքով եւ արդար հպարտությամբ ի սփյուռք աշխարհի տոնեց 20-ամյակը վերահաստատված մեր անկախ պետականության: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ օրհնեց մեր երկրի շենացման, ազգային եւ եկեղեցական մեր կյանքի գործացման համար մեր ժողովրդի ներդրած ջանքերը, համծնառությունն ու նվիրումը:

Լավատեսության այս ոգով, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, դիմավորենք Նոր տարին: Մենք ենք 2012 թվականը դարձնելու ձեռքբերումներով եւ ուրախությամբ լեցուն, մեր խնդիրների վճռման եւ մեր նպատակների իրագործման օրհնյալ ժամանակ: Քիչ չեն մեր կյանքի հրամայականներն ու անհրաժեշտությունները. յուրաքանչյուրիս ջանք ու նվիրումով, ազգի, եկեղեցու, Հայրենիքի եւ միայնաց հանդեպ մեր սիրով ու պատասխանատվությամբ են պայմանավորված մեր կյանքի խաղաղ զարգացումն ու առաջընթացը: Մեր ամեն քայլում, խոսքում եւ գործում լինենք միասնական, լինենք արդարամիտ, բարեխիղճ ու գթասիրտ, որպեսզի կարողանանք վերափոխել մեր կյանքը եւ մեզ ընձեռված ժամանակը պանծալի ձեռքբերումներով դարձնել գրո արժանի հայոց տարեգրության մեջ:

Իրադարձային է 2012 թվականը: Պետականորեն եւ համազգային շուրջով նշելու ենք հայ գրատպության 500-ամյա հոբելյանը: Ֆրանսիայի Սենատում քննարկման է դրվելու, եւ հույս ունենք, որ վավերացվելու է Յեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 հունվարի, 2012 թ.)

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշեց մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Բրիստոսի Սբ Ծննդյան եւ Աստվածհայտության տոնը:

Մայր տաճարում հայրապետական Պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպես առընթերականեր ունենալով Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանին եւ Վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանին:

Հայրապետական թափորն Ամենայն Հայոց Հայրապետին եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին առաջնորդեց Մայր տաճար: Ամփոփանակիրներն էին գեներալ-մայորներ Տիգրան Գասպարյանը, Մելսիկ Զիլինգայանը, Կամո Բոչուկը եւ Ալբերտ Մարդոյանը:

Յանուն Հոր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Որ ընդունի գՐՈՂԻՆ, ընդունի եւ զԵՆԱՆՍ.

Եւ որ ոչ ընդունի գՐՈՂԻՆ
Աստուծոյ, եւ ոչ զԵՆԱՆՍ ընդունի»

(Ա Յովհ. Ե 12):

ծարուրով փաթաթված նորածին Մանուկին՝ ողջունեցին Փրկչի գալուստը աշխարհ:

Սքանչելախորհուրդ Սուրբ Ծննդյան տոնին ամենքս ուխտավոր ենք Բեթղեհեմի՝ այցելելով Սուրբ Երկիր կամ մեր հոգին դարձնելով Բեթղեհեմ՝



Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ՝ ի Հայրենիս եւ ի Սփյուռք.

Այսօր մեր հոգիներում եւ մտահայացքի առջեւ աշխարհակեցույց «մեծ եւ սքանչելի» այն խորհուրդն է, որ ճառագեց երկնքում եւ երկրի վրա, երբ պայծառ աստղը կանգնեց Բեթղեհեմյան քարայրից վեր, եւ իրեշտակներն ավետեցին Փրկչի Աստվածորդու Սուրբ Ծնունդը՝ ասելով. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տերն է» (Ղուկ. Բ 11): Ավետարանները պատմում են, թե ինչպես հեռավոր երկրներից եկած իմաստուն մոգեր եւ մերձակայքում գտնվող հովիվներ փութացին դեպի քաղաքը եւ երկրպագելով խան-

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ Բրիստոսի Սբ Սկրտության, կատարեց ջրօրհնեցի արարողությունը, որի խաչի կնքահայրն էր «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Գաբրիել Զամբարջին:

Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Սամվել Նիկոյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, պետական բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, կրթության, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչներ:

Պատարագի ընթացքում Նորին Սրբությունն իր պատգամը հղեց համայն հայությանը:

Ելուրը մեր կյանքի եւ ճանապարհը հավիտենության: Այս խոստովանությունը լուսավորել եւ լուսավորում է մարդկության ուղին: Բրիստոսով Աստծո սերը հայտնվեց մարդկանց, Աստվածորդին աշխարհ եկավ՝ վերացնելու մեղքը, փարտելու մահվան խավարը եւ մարդկությանն առաջնորդելու դեպի Իր Արարիչը՝ ընդունելու համար հավիտենական կյանքը: Բրիստոսով աստվածային սերը տարածվում է ողջ աշխարհի՝ մարդու եւ բնության վրա, միշտ բարեկարգելու այն եւ կյանքով ու խնդության մեջ լցնելու: Սակայն աստվածային կամքին հակառակ ընթացքը կյանքը դարձնում է հիմնախնդիրների ու մարտահրավերների կիզակետ: Նայենք արդի աշխարհին. այն ծանրաբեռնված է բազում նեղություններով, գրկանքներով, հակասություններով ու բախումներով: Բրիստոսին եւ Նրա պատվիրանների մերժումը ծնում է պատերազմներ ու աղետներ, վնասում երկիր մո-

լորակը, պատճառ դառնում հոգու եւ հոգեւորի տկարացման, նաեւ՝ աստվածաշնորհի կյանքի բռնի ընդհատման, սպանությունների, ինքնասպանության: Մեր օրերի համընդհանուր ճգնաժամը, որ բացատրվում է քաղաքական, տնտեսական, նյութական պատճառներով, հիմնականում նույնպես օտարացման եւ հեռացման հետեւանք է դեպի Աստված տանող լուսավոր ուղուց, մեղսավոր ընթացքով երկնային սիրո պարգեւներից հրաժարման: Բրիստոս է կյանքը, Նրա պատվիրանները պահելով՝ Աստծո սերը, ճշմարտությունը, սրբությունը, արդարությունն ու ողորմությունն են իրագործվում աշխարհում՝ առաջնորդելով այն դեպի բարին ու կատարյալը, դեպի լիակատար կյանք, ինչպես մեր Տիրոջ երկրային կյանքն էր, որը հավատ ու սեր էր երկնային Հոր հանդեպ եւ օրհնություն՝ մարդկանց համար:

Շարունակությունը՝ էջ 2



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Եկող տարի մեզ սպասում են մասնավորապես ժողովրդի ընտրությունները՝ առիթ ամենայն ջանք գործադրելու, որ մեր ժողովուրդը ազատ կամքի արտահայտությամբ առավել զորացնի ամուր հիմքեր հայոց պետականությանը և իր բարձր ու շեն կյանքին։ Հզոր ու ծաղկուն Հայրենիքը հույսն ու երաշխիքն է մեր լուսավոր գաղիքի, ապահովությունը, բարգավաճումն ու բազմապատկումը մեր ընտանիքների, գրավականը հայրենադարձության, գործող կոմանդ հայապահպանության, որ Սփյուռքում ապրող հայությանը սերունդները հարազատության ամուր կապով կապված լինեն Մայր Հայրենիքին և մասնակից՝ հայրենական կյանքին։ Լավատեսությունը մեր հոգում, մեր ուժերի հանդեպ պատահությանը ապրենք, սիրելի՛ ժողովուրդ, և հավատանք, որ մեզ հաջողություններ կպարգևի Տերը, Ով հաղթանակով պսակեց մեր անկախ պետականության վերահաստատումը և օրհնեց մեր պետական, ազգային ու եկեղեցական կյանքի ձեռքբերումները։

Տարեմուտի այս հուսատառ պահին, երբ ընտանյաց անդամներով, ընկերներով, բարեկամներով համախմբված դիմավորում ենք Ամանորը, մեր առաջին աղոթքը վերադարձնենք Լուսավորչ և հայրենի, որ խաղաղություն պարգևի աշխարհին, խաղաղ պահի մեզ Հայրենիքում և Սփյուռքում՝ հավատքով գործվող, գործով հաղթական։ Թող Տիրոջ շնորհներն ու օրհնությունը հեղվեն մեր կյանքին և իր բարեխնամ առաջնորդությունը լինի մեզ հետ՝ այսօր և միշտ։

Շնորհավոր Նոր տարի։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ...

Սկիզբը՝ էջ 1

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հավատքն ու սերը այն անսասան հիմքն են, որի վրա հաստատուն մնալով՝ պիտի գործնականացնենք մեր երկրի ու ժողովրդի կյանքը, լքվի խնդրությամբ ու բերկրանքով։ Հավատքի եւ սիրո արգասիքները ազնվության, արդարության, կարեկցության, միմյանց սատարումի եւ գորակցության բարի գործերն են, որ միշտ ուղեկից են լինելու մեզ, եթե մեր ուղին չխտորվի Զրիստոսի լուսավոր ճանապարհից։ Մեր օրերում, նաեւ մեր կյանքում հավատաշեն գործերի, աստվածահաճո բազում ձեռնարկների կողքին ցավով կարելի է տեսնել աստվածամերժ ընթացքներ, մեր ժողովրդի քրիստոնեական նկարագրին անհարկ բարքեր, ազգային նվիրական արժեքազրկ խաթարում, նաեւ՝ հոգեւորի անտեսումով նյութականի, դրամի գերադասում, որը դառնում է գլխավոր նպատակ՝ փոխանակ լինելու կյանքի արդար ու բարի ընթացքը կազմակերպելու միջոց։ Նման դրսևորումները, հաստատապես, պարպում են կյանքը Զրիստոսի կենարար ներկայությունից, զրկում այն հոգեւոր ուրախությունից, գթասրտությունից, մարդասիրությունից, ազնիվ ու վեհ զգացմունքներից, տերունաշնորհ փրկությունից։ Զրիստոսն զգուշացնում է մեզ այդ կործանարար ճանապարհից՝ ասելով. «Ի՛նչ օգուտ է մարդուն, եթե ամբողջ

աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. Ը 36)։ Սիրելիներ, մեր Տիրոջ ցույց տված ճշմարիտ սիրո օրինակով նորոգենք այսօր մեր կյանքը, որը տակավին գերծ չէ կարիքներից ու դժվարություններից, մեր երկրի եւ ժողովրդի առաջընթացն ու բարությունը կասեցնող արտաքին եւ ներքին հիմնահարցերից։ Ներկա կյանքի խնդիրներն ու հրամայականները չեն կարող սասանել մեր կամքը՝ հաղթահարելու խոչընդոտներն ու արգելքները եւ միմյանց աջակից՝ ծառայելու մեր երկրի գորացմանը, ազգային վերելքին եւ լուսավոր գաղիքի կառուցմանը։ Մեր կյանքի առաջընթացը լուսառատ խորհրդունքներ է պարգևելու, եթե համագային ջանքերի մեկտեղումով հանձնառու գտնվենք գործելու հասարակությանը բարիք բերելու, Հայրենիքին, ազգին ծառայելու ճգնաժամով՝ զուգակցելով օրինապահությունը սիրո, արդարադատությունը՝ գթասրտության, հարստությունը՝ ողորմության, ուժը՝ աջակցության, կարողությունը՝ սպասավորության հետ, քանզի ընդունում եւ դավանում ենք կյանք պարգևող Որդուն։ Այսօր մոգերի ու հովիվների օրինակով խոսարիվենք Զրիստոսի առջեւ, ընդունենք Տիրոջ մեր սրտերի մուրներում, նորոգվենք մեզ պարգևաված փրկության շնորհով եւ միշտ հիշենք, որ Տիրոջ «ողորմութիւնը սերնդից սերունդ իր երկիրաճների վրայ է» (Ղուկ. Ա 50)։

Սուրբ Շնորհալուսն ու Լուսավորչությունը հոգեւորապես տոնի առիթով քրիստոնեական սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրաֆյանին, սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիգրան Սահակյանին։ Հայրապետական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին։ Սուրբ Շնորհալուսն ազնիվ ողջունում ենք ընդ Սուրբ Եկեղեցիների հոգեւոր պետերին, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին։



Ավետաբեր ու շնորհառատ այս օրը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աղոթենք եւ հայցենք մեր Փրկչին՝ ասելով. «Տե՛ր, թող Զո Սուրբ Շնորհալուսն շնորհները լուսավորեն աշխարհը համայն, խաղաղության հրեշտակաճայն ավետիսը հնչի երկրի բոլոր ծագերում, հաճությունն ու համերաշխությունն ուղեկից լինեն ազգերին ու ժողովուրդներին, եւ երջանկությունն ու խնդությունը թագավորեն բոլոր ընտանիքներում։ Թող Զո Սուրբ Շնորհալուսն լույսի առջեւ նահանջեն ատելություն եւ հակառակություն, հուսաբեկություն, անտարբերություն, դառնություն եւ տխրություն, եւ համայն աշխարհը պարուրվի Զո պարգևած սիրով ու հույսով։ Զո խնամքի մեջ սիրով, միաբան պահպանիր, Տե՛ր, աշխարհասփյուռ ազգիս հայոց եւ պարգևիր բարձր ու շեն կյանք, բարգավաճում եւ հզորություն՝ Հայաստան եւ Արցախ մեր երկրին, առավել լույս ու պայծառություն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, եւ մենք՝ Զո խոսքին հավատարիմ, գործերով վկայենք մեր հավատը՝ մեր սրտերում միշտ զգալով ուրախությունը կենսապարգեւ Զո ներկայության եւ ցնծությամբ ավետելով բարի լուրը Զո Սուրբ Շնորհալուսն՝

Զրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՎԻՍԻ ՍՐ ՆՇԱՆ ԿԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿՐԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓԼՈՒՂՄԱՆ ԱՌՆՋՈՒԹՅԱՄԸ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնում տեղի ունեցավ

փլուզման նախադեպերը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն



Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով, որի ընթացքում քննության առնվեց Թիֆլիսի Սր Նշան հայկական եկեղեցու փլուզման խնդիրը։ Ժողովն ընդունեց հետևյալ հայտարարությունը.

«Ցավով տեղեկացանք, որ հունվարի 9-ին փլուզվել է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում գտնվող Սր Նշան հայկական եկեղեցու հյուսիսարևելյան հատվածը։

Մեծապես անհանգստացած սույն փաստով եւ նկատի ունենալով Շամխորեցոց Կարմիր Ավետարան եւ Մուղնեցոց Սր Գերագույն հայկական եկեղեցիների

արտահայտում է իր խոր մտահոգությունը։

Դեռևս 2011 թ. հունիս ամսին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Կրաստան կատարած հովվապետական այցի ընթացքում Կրաստանի Հանրապետության Նախագահ Սիխայիլ Սահակաշվիլիի եւ Կրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ-ի հետ տեղի ունեցած հանդիպմանը հայկական կողմին հավաստիացում էր արվել, որ փլուզված եւ փլուզման վտանգի ենթակա հայկական եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք եւ հոգատարություն կդրսևորվի։



Հակառակ Մայր Աթոռ Սր Էջմիածնի եւ Վրահայոց թեմի կողմից հնչեցված ահազանգերի՝ վրացական կողմի անուշադրությունը եւ հապաղումը հրատապ խնդիրների լուծման մեջ, ցավով, այսօր կանգնեցրել է մեզ տխուր այս իրավիճակի առջեւ։

Գերագույն հոգեւոր խորհուրդը կոչ է ուղղում Կրաստանի իշխանություններին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել փրկելու կործանումից Սր Նշան հայկական եկեղեցին, հետամուտ լինել Կրաստանի մշակութային ժառանգության մաս կազմող հայկական սրբավայրերի պահպանությանն ու խնամքին եւ ընդառաջ Վրահայոց թեմի խնդրանքին՝ վիրահայությանը վերադարձնել պահանջված հայկական եկեղեցիները։

Նշանակումներ Մայր Աթոռ Սր Էջմիածնի կառույցներում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռի կառույցներում եւ թեմերում կատարվել են Նոր նշանակումներ։

Մայր Աթոռի միաբան Կորյուն աբեղա Առաքելյանը ծառայության է կոչվել Արմավիրի թեմում։ Շնորհք արեղա Սարգսյանը, գաղտնվելով Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսչի պարտականություններից, ծառայության է անցել Մայր Աթոռ Սր Էջմիածնում։ Նշան աբեղա Հմայակյանը, ազատվելով Սեւանի Վազգենյան դպրանոցում ստանձնած պարտականություններից, իր ծառայությունը կշարունակի Հառիճավանքի ընծայարանում։

2011-ի դեկտեմբերին ձեռնադրված հոգեւորականներից Չաքարիա աբեղա Բաղդույանը, ավարտելով ծառայությունը ՀՀ զինված ուժերում, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սր Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում՝ որպես ծիսական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու։ Ահարոն աբեղա Շախվերդյանը նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ։ Հունիսին Սարգսյանը կշարունակի իր ծառայությունը Մայր Աթոռի դիվանատանը, իսկ Ենոկը քին. Եսայանը՝ Հայոց բանակում։

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԻՍՏՆԵՐ

ՎԼԵՔԱՆԴՐ Կ ՓՈՒՂԱՅԵՉԻ (1706-1714)

Սկիզբը՝ 2011-ի թիվ 24

Կոմիտասի Նահատակությունից ոչ շատ առաջ՝ 1707 թ. ապրիլի 19-ին, Սեբաստիայում ձերբակալվել էր երեք հայ՝ կաթոլիկացման մեղադրանքով, որոնց թիվը երեքով էլ աճեց հարցաքննության ժամանակ: Սեբաստահայության երկպառակությունների արդյունքում տուժեց նաև Միքայել քահանան: Նա ծնունդով հարբերդի Բրգնիկ գյուղից էր: Միքայել Բրգնիկցին ձերբակալվեց ապրիլի 20-ին, հրաժարվեց կրոնափոխ լինելուց եւ 21-օրյա բանտարկությունից հետո կախաղան բարձրացվեց՝ 1707 թ. մայիսի 10-ին կամ 11-ին: Նրա վրա են բարդում Բրգնիկ գյուղի կաթոլիկացման մեղքը, սակայն նա իրականում հայկական դավանությունը պահելու համար մահապատժի ենթարկվեց:

Մատթեոս Սարու եւ այլոց ուրացությունը, Կոմիտաս եւ Միքայել քահանաների Նահատակությունը մի պահ կասեցրին ժողովրդի գայլությունը: Օսմանյան իշխանություններն էլ այլեւս հարմար չգտան բռնությունները շարունակել: Մեծ վեզիր Չորլուլուն էլ ցույց տվեց, որ հավատում է Լյուդովիկոս 14-րդ ֆրանսիական թագավորի՝ օսմանյան իշխանություններին ուղարկած նամակներին, որոնցում նա խոստանում էր Իտալիայում եւ Իսպանիայում փնտրել Ավետիքին, որին հենց իր հրամանով բանտարկել էին Սբ Միքայելի վանքում, այսինքն՝ գտնվում էր ֆրանսիական գերության մեջ: Մյուս ձերբակալվածներն էլ, քննարկվածները, որոնց մեջ էր Կարապետ Ճամջյան քահանան, որը ձերբակալվել էր Կոմիտասի հետ, կարողացան դրամի կամ տուգանքների միջոցով ազատվել: Հանրությունն էլ հոգնել էր

այդ անհանգիստ կացությունից եւ կարիք ուներ ավելի խաղաղասեր պատրիարքի, քան Հովհաննես Չմյուռնացին էր: Հետեւանք այն եղավ, որ նա ստիպված էր հեռանալ պատրիարքությունից, որը նորից զբաղեցրեց Սահակ Ապուլեխցին՝ իր հանդարտաբարո կեցվածքի շնորհիվ: Հովհաննես Չմյուռնացին, փաստորեն, պաշտոնավարեց ընդամենը 15 ամիս: Հավանաբար նա մահացավ պատրիարքությունը կորցնելուց շատ չանցած, իսկ Սահակ Ապուլեխցին պաշտոնավարեց 5 տարի, որը պարզապես հրաշք էր այդ անհանգիստ ժամանակներում:

Իսկ ի՞նչ էր կատարվում Կ. Պոլսի սահմաններից դուրս: Մխիթար Սեբաստացին, որ շտապով հեռացել էր Չմյուռնից, 1702 թվի հոկտեմբերից մինչեւ 1703 թվի փետրվարը հարկադրաբար մնաց Չառնա կղզում: Նրա համակիրներից ոմանք հասել էին Նեպոլ, եւ նրանք էլ Մխիթարին հրավիրեցին իրենց մոտ, սակայն նա, Նեպոլ գալուց շատ չանցած, գերադասեց հաստատվել Մեթոնում կամ Մոթոնում, որը գտնվում էր Պելոպոնեսի արեւմուտքում՝ Մենեսիայում: Վենետիկյան հանրապետության պաշտոնյաները նրան բնակվելու իրավունք տվեցին եւ անգամ հողային կալվածքներ շնորհեցին՝ պայմանով, որ նա երեք տարում կարողանա վանք կառուցել: Եվ ահա 1703 թվի ամռանը Մխիթարն իր 15 հետեւորդներով՝ 4 արեղա եւ 11 դպիր, տեղափոխվեց Մեթոն: Նա նրանց հետ միասին հաստատվեց մի ընդարձակ շինության մեջ, որը նվիրեցին վենետիկյան իշխանությունները: Այստեղ նրա հիմնածը դեռեւս հայադավան վանք էր: Սակայն գտնվելով լատինական պետու-



թյան մեջ՝ նա ստիպված էր քիչ թե շատ տուրք տալ կաթոլիկությանը եւ միաբանություն հիմնել: Այսպես ստեղծվեց Սուրբ Անտոն աբբայի միաբանությունը, որի կանոնները գրված էին իտալերեն: Անվան ընտրությունը, հավանաբար, կապված էր Լիբանանում հաստատվելու մտադրության հետ, քանի որ սբ Անտոնի անունով էր կոչվում մարոնականների վանականությունը Լիբանանում: Սակայն Մեթոնում նրա շփումները լատին հոգեւորականության հետ աստիճանաբար նրան հետ պահեցին Արեւելքում հաստատվելու մտքից, եւ նա որոշեց ապավինել լատինների պաշտպանությանը:

Արդեն 1705 թվին նա Կոնստանդուպոլսում արեղա քաղաքում ապաստանեց՝ պաշտոնապես հայտնելու իր դավանության եւ միաբանության վերաբերյալ: Նրանք տեղ հասան հոկտեմբերին եւ չնայած վենետիկյան դեսպանի պաշտպանությանը՝ պապական դիվանին չկարողացան համոզել իրենց միաբանության կաթոլիկական բնույթի հարցում: Հակասական տեղեկությունների պատճառով ստուգումներ եղան, որոնց արդյունքում 1706-ին պատվիրակ եղիւ վարդապետն առանց ոչնչի հասնելու ետ վերադարձավ Մեթոն, իսկ Հովհաննես վարդապետը մնաց Հռոմում՝ խտալերեն եւ լատիներեն սովորելու: Նա մտադիր էր շարունակել Մխիթարի միաբանության դիմումները: Այդ նույն թվականի ապրիլին գերված Ավետիքին

տանող նավը մտավ նաեւ Մեթոն, սակայն ո՛չ Ավետիքն իմացավ, որ Մխիթար Սեբաստացին այնտեղ է, եւ ո՛չ էլ Մխիթարն իմացավ, որ Ավետիքը գերված է ու գտնվում է այդ նավում:

Մխիթարը երեք տարում վանքը հիմնադրեց, սակայն հայտնվեց պարտքերի տակ: 1708 թվին նա հայկական եկեղեցու հիմքը դրեց, որպեսզի լատին եկեղեցի չհաճախեն:

Շինությունն ավարտվեց 1711 թվին, եւ միաբանությունը լիարժեք ձեւավորվեց: Այդ ժամանակ էլ նա որոշեց ձեռք բերել Արեւմուտքի եկեղեցու պաշտպանությունը, սակայն հանդիպեց դժվարությունների, քանի որ պապականությունը կասկածով էր վերաբերվում հայկական ինքնությունը դեռ պահպանող Մխիթարին: Փաստորեն, նրանից պահանջվում էր կաթոլիկանալ: Այդ պայմանի մասին նրան զգացրեց Հռոմում գտնվող Հովհաննես վարդապետը, եւ Մխիթարն ի վերջո որոշեց լիովին ենթարկվել Լատին եկեղեցուն եւ սբ բենեդիկտյանների կանոններին անցնել: Այսպես նա ստացավ պապի օրհնությունը, որի լուրը 1712 թվին Մեթոն բերեց Հովհաննես վարդապետը: Միաբանության կաթոլիկացմանը պաշտոնական կերպարանք տրվեց 1712 թ. սեպտեմբերին՝ Կորնթոսի լատին արքեպիսկոպոսի մոտ: Մինչ այդ Մխիթարի աշակերտությունը ոչ պաշտոնական իրողություն էր՝ կամովին իրար հետ ապրողների մի խումբ, որը չէր ենթարկվում ո՛չ Հայոց Եղեղեցուն եւ ո՛չ էլ Կաթոլիկ եկեղեցու կողմից: Եր ճանաչված: Հետեւաբար միանգամայն ճիշտ է Մ. Օրմանյանը, թե Մխիթարի միաբանության պաշտոնական սկզբնավորությունը պետք է դնել 1712 թվի սեպտեմբերից: Մխիթարի միաբանությունը հիմնված էր բենեդիկտյանների կանոնների վրա, իսկ Մխիթարն սկսեց կրել աբբաիայի տիտղոսը, որը կամաց-կամաց վերածվեց մակդիրի:

1712 թիվը եղավ նաեւ Հայոց եկեղեցուց Մխիթարի խզման տարի, չնայած նա սրտի խորքում պահպանեց իր հայկականությունը, որի վկայությունն է նրա միաբանության հայրենական գործունեությունը:

Ժամանակին նշել ենք Բերիայի Մուրադյան եղբայրների կողմից Լիբանանում հայկական կաթոլիկական միաբանություն հիմնելու մտադրության մասին: Նրանցից Աբրահամը՝ երիցագույնը, շրջագայություն էր կատարել Լիբանանում եւ վերադառնալով Բերիա՝ եղբայրների հետ որոշել էր այդ իրականացնել 1707 թվի Ավետման օրը, այսինքն՝ ապրիլի 7-ին: Նրանք վերջ էին տվել իրենց առեւտրական գործունեությանը, սակայն եղած գումարով չէին կարողացել կրոնական հաստատություն հիմնել, քանի որ Պետրոս Բերիացին հալածանքներ էր սկսել հռոմեացիականների դեմ: Վերջինս Սսի հակաթոռ կաթողիկոսն էր եւ ուշադրությամբ հետեւում էր Հովհաննես Չմյուռնացու գործունեությանը Կ. Պոլսում: Երկու միջնեկ եղբայրները՝ Հովհաննեսը եւ Հակոբը, մտան Սբ Եղիսեի վանքը՝ Արղալաիի ղեկավարությամբ վանականություն ուսումնասիրելու, կրթւթըը՝ Միհայր, առեւտրական գործերով մեկնեց Սիրիայի Տրիպոլիս քաղաքը, իսկ Աբրահամը մեկնեց Լիբանան՝ վանքի համար ապահով տեղ գտնելու: Մարոնականները դժվարություններ հարուցեցին՝ հայերի կաթոլիկ չլինելու պատճառով: Մարոնական պատրիարք Հակոբը վանքը կառուցելու համար արտույնություն չտվեց, մինչեւ նրա վանահայր Արղալաիքը եւ Սախա Խազիկյան իշխանավորը չփարատեցին նրա կասկածները: Վերջինս իրեն պատկանող Զեքրովան գավառում՝ Ընդիլիաս գետի ձորամիջում, Աֆքար կոչված բլրի վրա շինված տնակը 1709 թվին վանքի համար նրանց հատկացրեց՝ ստանալով տեղական եւ եկեղեցական իշխանությունների հավանությունը:

Շարունակությունը՝ էջ 4

Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոներ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում



Մոսկվա



Աստրախան

Հունվարի 6-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եդրաս Եպս Ներսիսյանի ձեռնամբ Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցվեց Մոսկվայի Սբ Հարություն եկեղեցում: Պատարագի ընթացքում սրբազան ընթերցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով համայն հայությանը հղած հայրապետական պատգամը:

Պատարագի ավարտին բոլոր եկեղեցիների նման այստեղ եւս կատարվեց ջրօրհների արարողություն՝ ի հիշատակ Հորդանան գետում Հիսուսի մկրտության: Աղոթքների ու շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվեց Ավետարանով, խաչով եւ սրբագործվեց մյուռնով:

Սրբազան հայրը, խաչի իջեցնելով ջրի մեջ, Աստծուց հայցեց, որ ինչպես Սբ Հոգին իջավ Տիրոջ վրա, այժմ նույնպես



Կիրով

իջնի, օրհնի ու սրբացնի ջուրը, որպեսզի այն դառնա «տներին շինություն, հիվանդներին բժշկություն, հոգիներին ու

մարմիններին փրկություն»:

Սբ Խորանիկ հոգեւորականների հետ միասին եկեղեցու բարեպաշտ գավակ, բարերար Սամվել Հովհաննիսյանն էր, ով արժանացել էր տարվա ջրօրհների խաչի կնքահայր լինելու պատվին:

Արարողությունից հետո, ինչպես ընդունված է, հավատացյալներն օրհնված ջուրը տուն տարան, որպեսզի ընտանիքի անդամներին եւս հաղորդակից դարձնեն օրվա խորհրդին:

Մոսկվայի առաջնորդանիստ Սբ Հարություն եկեղեցուց բացի, Ս. Ծննդը հայերին մեկտեղեց նաեւ Դոնի Ռոստովի, Կիրովի, Կոլզոգորդի, Բառնաուլի, Աստրախանի, Սանկտ Պետերբուրգի, Վլադիվոստոկի, Կալինինգրադի եւ թեմի մյուս եկեղեցիներում եւս:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամուլ դիվան

Խորհրդածողով Կիպրոսում

Դեկտեմբերի 17-25-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում կայացավ «Կորյ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հրավիրված խորհրդածողովը՝ նվիրված կիրակնօրյա դպրոցներում կիրառվող պատանիների աստվածաշնչյան դասընթացի ծրագրի գնահատմանը: Հիշյալ ծրագրի շրջանակներում է պատրաստվել կիրակնօրյա դպրոցներում գործածվող ծրագրային միակ դասագիրքը, որի միջոցով երեխաները, պատանիներն ու երիտասարդները ճանաչում են Աստծուն, սովորում աստվածաշնչյան պատմություններն ու պատգամները, կարգավորում իրենց հոգեւոր կյանքը՝ որպես եկեղեցու լիարժեք հավատացյալներ:

Հայաստանից ժողովին մասնակցեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ներկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քին. Ավետիսյանը: Խորհրդածողովին մասնակցում էին հոգեւորական ու աշխարհական ներկայացուցիչներ նաեւ Ռումինիայից, Ալբանիայից, Սերբիայից, Բոսնիա-Հերցեգովինայից, Լիբանանից, Կրաստանից, որտեղ իրականացվում է հիշյալ ծրագիրը:

Զննարկվեցին «Կորյ Վիժն» կազմակերպության կողմից հիշյալ երկրներում կատարված գնահատման արդյունքները՝ ծրագրի ունեցած ազդեցության վերաբերյալ, ըստ որակական ու քանակական վիճակագրության՝ որոշվեց ծրագրի հետագա ընթացքը, եւ որոշեցվեց Նոր ռազմավարություն՝ շարունակականությունն ապահովելու նպատակով:

Լրատվական կյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.) Արշակ ՄԱՊՈՅԱՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՐ ՍՈՒՐ ԱՌՆՈՒՑՈՒՆ՝ ՍՐՈՎ ԱՆԿՑԻՆ

Նվիրվում է Հայոց Բանակի 20-ամյա հորեկյանին

Ավելի քան 1700 տարի առաջ՝ 301-ին, Հայ Եկեղեցու երկու մեծ սրբերը՝ Տրդատ Գ Արշակունին եւ Գրիգոր Լուսավորիչը, քաղաքական որոշումով պետական կրոն հռչակեցին քրիստոնեությունը՝ նկատի ունենալով վերջինիս բարոյական բարձր չափանիշները: Այդ պահից իրար մերձեցան Հայրենիք եւ Եկեղեցի հասկացությունները: Հայի ըմբռնումով՝ եթե մեկը սուր է բարձրացնում իր կրոնի դեմ, վտանգվում են ազգը, հայրենիքը, մայրենի լեզուն: Եվ նա անվարան ընդդիմացել է բռնությանը՝ անգոսնելով թշնամական ուժի գերակշռությունը, վստահելով Սուրբ Գրքի պատգամին, թե «Ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկցին» (Մատթ. Ի2. 52): Իսկ հաղթանակն ավելի շատ սիրում է արդարին. գերազանցություն ունի նա, ով թեկուզ սակավ ուժերով պաշտպանում է իր հայրենի հողը, եկեղեցին ու մայրենին: Եվ դարավոր մաքառումը արդարացրել է իրեն, հաջողություն է բերել հայրենիքի զինվորին, որ կռվել է աներկեան հավատով, հույսով ու սիրով, եւ ի վերջո սրով եկողը ընկել է սրով:

ԱՎԵՆԵՔԵԱՆ Ե ՀԱՐՈՍՆԱԿ, ԻՍԿ ՊԱՐԳԵՎԸ՝ ԱՇՈՍ ՀԱՅՐԵՆԻՔ

ԺԸ դարի վերջին Աղա-Մահմադ-խանի կողմնակա արշավանքները նոր լիցք ու ավյուն էին ներշնչել հատկապես Շուշիի ու Նախիջևանի պարսիկ խաներին, որ, ինչպես մատենագիրն է ասում, ավելի ու ավելի լկտիացած՝ «ավեր, ավար, սպանություն, առեւանգում» են սփռում ոչ միայն պարսիկներին ենթակա շենքերում, այլեւ հայ մելիքների տիրույթներում: Խաչենի, Ջրաբերդի, Գուլիստանի հայ իշխանները տարակուսանքի են մատնվում տազնապալի կացությունից:

1796 թ. վաղ գարնանը Ջրաբերդի մելիք Աղամ-Մեծը խոկում էր, ելք էր որոնում եւ մշտապես կրկնում էր. «Անտարբերությունը կարող է մեզ գլորել ստրկության անել խորը»: Նա թողնում է սուրբ


հնակնյան անապատի մերձակա իր ապարանքը եւ վերականգնում է Զաղաքատեղը՝ Թարթառի ափին: «Եվ նրա ամրակառույց բերդաքաղաքը, ասում է Սեյյա-նը, սկսեց մրցել շրջակա ժայռերի հետ»:

Մինչդեռ նա զբաղված էր շինարարական եռուզեռով, մութ ուժերը համախմբվում են, մեծ խոստումներով իրենց կողմն են հրապուրում «հերակլյան ուժի տեր» մեծշենցի Լաչին եղբայրներին, որ, «ուրանալով կրոն ու ազգ, ուրանալով պատիվ ու խիղճ, իբրեւ կիսավայրենի ցեղի վիժակներ», պատուհաս էին դարձել իրենց հայրենիքի գլխին:

Նախիջևանի խանը հարձակումների ծրագիրը ըննարկում է ավագ Լաչինի հետ: Նրանք հասկանում են, որ հեշտ չի լինի Մելիք-Աղամի ամրոցի առումը, որ ինչքան էլ տկար լինի՝ նա «կարող է այդ ամրությունից կրակ թափել, շանթակոծել, ջնջել մեծամեծ բանակներ»: Ուրեմն, մտածում են նրանք, անհրաժեշտ է միաժամանակ հարձակվել տարբեր ուղղություններով, որպեսզի հայերն իրար օգնության հասնել չկարողանան: Եվ նախ գրոհում են հարեւան գավառները: Մելիք-Աղամն իր արհագունը բանակը ուղարկում է վտանգի մեջ հայտնված եղբայրներին օգնելու: Սակայն շուտով պարզվում է, որ ավագ Լաչինի առաջնորդությամբ պարսկական մի զորամիավոր շարժվում է դեպի իր ամրոցը:

Արդեն հնարավոր չէր հետս կոչել զորքը, ուստիեւ պետք էր այլ հնար գտնել: Ծանրութեթեւ անելով բազմաթիվ վարկածներ՝ Աղամ Մեծն ու իր խորհրդական Մելքումը մտածում են՝ թշնամական ուժերին թերեւս պետք է դիմագրավել Թարթառի դժվարանցանելի կիրճում՝ Թունիկադըբուրի մոտ: Գրեթե անպաշտպան մնացած Զաղաքատեղին սպառնացող վտանգը կանխելու միակ հնարավորությունը ռազմական հնարամտությունն է, որ խոստանում է փոխհատուցել ուժերի անհավասարությունը:

Ծրագիրը գնալով հստակվում, որոշակի կերպարանք է առնում: Ակնհայտ էր՝ ամրոցում մնացած սակավաթիվ ռազմիկներից մի փոքր խումբ միայն հնարա-



ՄՐԵԱԿ
ՄԱՊՈՅԱՆ

ԱՄԵՆԵՔԵԱՆ
ՈՐ ՍՈՒՐ
ԱՌՆՈՒՑՈՒՆ՝
ՍՐՈՎ ԱՆԿՑԻՆ

վոր էր առանձնացնել հանդուգն մտահղացումն իրագործելու համար:

«Բայց այնուամենայնիվ հնարավոր է մի բուռ նվիրյալներով կանգնեցնել վիթխարի հեղեղը», Երկմտում էր Աղամը: Մելքումն աշխատում էր ցրել մելիքի տարակուսանքը, թե՛ նա բնությամբ ավելի անհողողող էր ու լավատես:

«Մելիքն ապրած կենա, միջամտում է խորհրդականը, առյուծի բույնը միշտ կունենա կորյուն: Դեռ չէ դադարած Արցախը հերոսների օրրան լինելուց...»

Առավոտյան մունետիկն ազդարարում է, թե պահն օրհասական է, եւ պետք են մի խումբ անձնուրացներ: Եվ շուտով իշխանին է ներկայանում Մելքումի միակ որդին՝ Եսային, «հսկա կազմվածքով, գրավիչ, արեւակեզ դեմքով, ջինջ, մաքուր, հրատի պես վառվռուն աչքերով», որ «կիսավայրենու հանդգնության շուրջ էին տալիս նրա առնացի դեմքին»: Մելքումի համար անսպասելի էր որդու հայտնությունը, բայց սիրտը թունդ է առնում ոչ դրանից, այլ որ հաստատվում է իր խոսքը, թե «առյուծների որջին մեջ չէ պակաս կորյուն», եւ այդ կորյունն իր գավակն է, «որ վասն կրոնի եւ հայրենյաց՝ այդ զուգափառ աստվածության, մերկացնում է սուրբ մի չարագործ պատժելու»:

Վեհանձն, բայց անփորձ հերոսը չափվելու է Լաչինի հետ: Նրա պատկերացմամբ այդ դավաճանը «սատանի խելք ու դեկ ձեռք» ունի: Իբրեւ զուգակշիռ՝ մատենագիրը հիշում է Դավթի ու Գողիաթի աստվածաշնչական կռիվը (Ա Թագ. ԺԷ): Եվ նա իրավացի էր, դեպքերի հաջող ընթացքը կարծես կրկնում է այդ մենամարտը:

Եսային գիտեր անօրենների ասացվածքը

Կորկատեղի մասին. «Սարսանգը դուռն է Արցախի, իսկ հայը փականքը»: Հենց այդտեղ պետք է կանգնեցնել թշնամու առաջխաղացքը: Եվ իր օգնական մոխրաթաղցի Սահակի հետ դիմում է դեպի Կորկատեղ՝ հրաժարվելով ավելի մեծ թվով զինակիցներից:

Մարտավարական ճիշտ ելակետն ու վայրի ընտրությունը գործին հաջողություն էին խոստանում: Հերոսը գիտակցում է, որ հեշտ է թշնամուն հարվածել նամազի կամ դրան հաջորդող ընթրիքի ժամանակ: Չնայած ուժերի անհամեմատելիությանը՝ մերժելի է համարում այդ հնարավորությունը: Նա ուզում է հակառակորդին խփել ձիու վրա կատարյալ մարտական պատրաստության վիճակում:

Եսային խորհում էր, թե Թարթառի գրեթե անանցանելի այդ կապանում բավական է շարքից հանել առաջնորդին, եւ գորքը նարից զրկված քարավանի նման կկորցնի ուղին, կմատնվի շփոթության: Եվ դա ճշմարիտ էր: Երբ մահացու վերքով Լաչինն ընկնում է դիտապաստ, թշնամական շարքերում իրարանցում է ծայր առնում, եւ անորսալի վրիժառուններին հաջողվում է սպանել կամ վիրավորել նաեւ մի քանի տասնյակ զինվորների՝ օգտվելով խուճապի շփոթությունից: Լաչինի մահը վերջնական հուսալքություն է բերում ենթականերին:

Արցախի երիտասարդ հերոսը պարտք է համարում դավաճան հսկայի գլուխը տանել Մելիք-Աղամին: Վերջինս դառնում է Եսային. «Դու պիտի ընդունիս քո վարձքը, խնդիրդ ուրեմն, որդյալ, ինչ կամենաս»: Սակայն վարձատրության համար չէր վտանգի մեջ նետվել Եսային: Եվ, բնականաբար, հրաժարվում է նվերներից...

Պատումի որոշ դրվագներ վիպական գծեր են ավելացնում արցախյան հերոսի դիմանկարին: Այդ առումով առանձնապես հետաքրքիր է Եսայինի հանդիպումը կրտսեր Լաչինի հետ: Դա, իրապատում լինելուց ավելի, կարծես ժողովրդական հերոսավեպի մի բեկոր լինի: Իրականն ու առասպելականը համահարթված են Թունիկադըբուրի մոտ տեղի ունեցած լեզվակռվի ժամանակ: Եսային հիշեցնում է Վասակ Մամիկոնյանի, ավանդազրույցների հերոսների սրամիտ, հանդուգն, անձնավստահ պատասխանները համանման իրավիճակներում, որ Լեոն պիտի անվաներ «երկրի պատվաճանաչության ըմբոստ կարողության ծայն»:

Ահա նրանց կարճ երկխոսությունը.

- Դեռ ապրո՞ւմ է այս կատվի ձագը, տամները կրճտացնելով՝ ոռնաց Լաչինը:

- Կատվի ձագը խեղդեց քո եղբայր այնու՞մ Լաչինին, իսկ այժմ մկան մահով պիտի սատակեցնե վագր Լաչինին...

Շարունակություն էջ 6

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ


ՎԼԵՔՍԱՆԴՐ Կ ՓՈՒՂՎՅԵՉԻ (1706-1714)

Սկիզբը՝ էջ 3

Սակայն Սուրադյան եղբայրներն ընդամենը մի քանի տարի կարողացան մնալ այնտեղ եւ ասպատակությունների պատճառով ապավինեցին Զյուրիքի գյուղին: Տեսնելով այդ՝ Խաչինյան իշխանը նրանց տվեց իր մի փոքրիկ Զրեյմ ագարակը՝ Ղոստա գյուղի մոտ: Նրանց հանձնվեց նաեւ ագարակում գտնվող տունը, որին վանքի տեսք տվեցին 1716 թվին եւ մարտի 3-ին փաստաթղթով դարձան դրա տերը: Նրանք իրենց միաբանությունը կոչեցին Անտոնյան:

Միաբանության միաբանության հանդես գալն Արեւմուտքում եւ Անտոնյաններին՝ Արեւելքում, լատինամետոության սկզբնական ձեռնարկներն էին՝ խրախուսված լատին քարոզիչների եւ ֆրանսիացի դեսպանների կողմից, ինչ

չը նպատակ ուներ հայերին ենթարկելու պապական իշխանությանը, չնայած պաշտոնապես պատրիարքարանի իշխանության ներքո էին՝ օսմանյան պետության մեջ: Դրան գալիս էին ուժ հաղորդելու Հռոմի եկեղեցական վարժարաններում դաստիարակված հայ երիտասարդները, որոնք որպես Հայոց Եկեղեցու պաշտոնյաներ կամ սպասավորներ՝ մուտք գործելով հայ հասարակության մեջ՝ հմուտ ձեռով պղտորում էին մարդկանց մտքերը: Դրանց մեջ էր Խաչատուր Առաքելյան կարնեցի վարդապետը, որը շարունակում էր իր գործունեությունը Կ. Պոլսում, նրան հետեւում էր Մելքոն Թասպայան մամուլուցի վարդապետը, որը նույնպես կրթվել էր Հռոմի Պրոպագանդայի դպրոցում եւ իր՝ հայրենիք վերադառնալուց



Ջուղայի Սբ Գրիգոր Լուսավորչի վանքը

հետո սկսել էր շուրջն աշակերտներ հավաքել, որոնց ուսուցանում էր կաթոլիկության սկզբունքներով: Դրանց մեջ նշանավոր եղավ Աբրահամ Արծուկյանը: Նրանք սողոսկում էին հայության մեջ՝ իբրեւ Հայոց Եկեղեցու սպասավորներ, եւ կատարում իրենց սեւ գործը: Թասպայանը

եպիսկոպոս ձեռնադրվեց 1708 թվին՝ Պետրոս Բերիացու կողմից, որը հայտնի էր Պիծակ մականունով: Իսկ Պիծակին հռոմեադավանները մշտապես համարել են կաթոլիկների հալածիչ: Իհարկե, կան նաեւ անձինք, որոնք Պիծակին լատինասեր են հռչակում, ինչը որեւէ կերպ չի

հաստատվում նրա՝ հայադավանության ջատագովի լույսով: Անհիմն է այն տեղեկությունը, թե նա աքսորվել է Պարսկաստան եւ այնտեղ մեռել, քանի որ նա մահացել է Երուսաղեմում: Մելքոնը տիրացավ Մամպուտի հայադավան վիճակին՝ որպես եպիսկոպոս, սակայն դրանից հետո լատինամուլ գործունեություն ծավալեց եւ գալով Կ. Պոլիս՝ լատինամետոների գլուխ անցավ՝ կամենալով դառնալ առաջնորդ եւ պատրիարք, ծայրահեղ դեպքում՝ յուրայինների: Երիցս ճիշտ է Մ. Օրմանյանը, երբ գրում է, թե լատինամետոությունը փառատենչ ձգտումները շղարշելու ընդունված ձև էր:

Թասպայանին հետեւեց նրա աշակերտներից Աբրահամ Արծուկյանը, որը ծնվել էր Այնթապում 1679 թվին եւ 1706-ին ձեռնադրվել աբեղա: Նա նույնպես եպիսկոպոս էր ձեռնադրվել Պետրոս Բերիացու կողմից:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր

ԿԻՅԱՆՈՒՄ

- Այս առակը Դուկասի Ավետարանում անմիջապես հաջորդում է «Անիրավ դատավորի եւ այրի կնոջ առակին» եւ նույնպես նվիրված է աղոթքի գաղափարին. մեկ տարբերությամբ, որ, ինչպես Օրմանյան պատրիարքն է ասում, առաջինը պահանջում էր աղոթքի հարատեւությունը, իսկ այս մեկն առավելապես ցույց է տալիս աղոթքի հոգին:

Եկեղեցու վարդապետները եւ մերօրյա սպասավորները հաճախ են այս առակն իրենց քարոզների կյուր դարձնում: Ինչո՞ւ է այսքան շատ խոսվում այս առակի մասին:

- Որովհետեւ այն փայլուն կերպով ներկայացնում է ընդունելի եւ անընդունելի աղոթքի կերպը, աղոթքի ներքին եությունը, այո՛, ինչպես Օրմանյանն է ասում, հենց աղոթքի հոգին:

Առակի բովանդակությունն այս է. երկու մարդ տաճար ելան՝ աղոթքի կանգնելու՝ փարիսեցին եւ մաքսավորը: Աստված ընդունեց փարիսեցու աղոթքը: Մակերեսային ընթերցման պարագայում կարող ենք ըմբոստանալ՝ ինչո՞ւ, փարիսեցու վարքը, թերեւս, ավելի շիտակ էր, քան մաքսավորինը. չէ՞ որ նա շնորհակալություն էր հայտնում Աստծուն... Բայց ինչի՞ համար էր այդ շնորհակալությունը, եւ ընդհանրապես, տեսնենք, թե ինչպես էր աղոթում փարիսեցին:

«Աստված իմ, շնորհակալ եմ Զեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, եւ կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծով եմ պահում եւ տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից» (Դուկ. ԺԸ 11-12): Այս էր փարիսեցու ողջ աղոթքը, որ ըստ էության՝ աղոթք չէր, այլ սեփական անձի գովերգ: Հիմա փորձենք խորանալ, թե ո՞վ էր փարիսեցին: Փարիսեցիների ու փարիսեցիության

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ «ԹՎՐԻՍԵՉՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՎՈՐԻ ՎՈՎԿԸ»

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ



մասին շատ է ասվել, բայց ավելորդ չենք համարում մեկ անգամ էլ հիշեցնել. փարիսեցիները իրեական կրոնական-հոգեւոր առաջնորդներն էին, օրենսգետները, այն բարձր խավի ներկայացուցիչները, ովքեր անառարկելի հեղինակություն էին վայելում իրեական շրջանակներում: Եվ ահա այս մեկի (առակի փարիսեցու) աղոթքի մեջ շարադրածում կարծես թե ամեն բան ճիշտ էր: Ճիշտ էր, որ շաբաթը երկու անգամ ծով էր պահում, որ տասանորդ էր տալիս: Առաջոց ճիշտ էր նաեւ այն, որ ինքն ուրիշների նման չէր, որովհետեւ մաքսավորների կամ հափշտակողների կամ շնացողների նման հայտնապես երեւացող մեղքեր չուներ: Սակայն եթե նույնիսկ այդ ամենը ճիշտ էր, եթե անգամ Աստծու առաջ էլ նա իրեն մաքուր պահած լիներ, միեւնոյն է, այդ աղոթքը սխալ եւ անընդունելի էր:

Ինչո՞ւ: Սովորական մի պատկեր. երկու մարդ գրուցում են, եւ մեկը սկսում է ինքն իրեն գովել: Ով էլ լինի, միանգամից հակակրակ է առաջացնում: Սողոմոն Իմաստունն ասում է. «Թող քեզ քո ընկերը գովի, եւ ոչ թե քո բերանը, օտարը, եւ ոչ թե քո շուրթերը» (Առ. ԻԷ 2): Եվ ահա օրենսդիր Աստված Ինքն է լսողն աղոթքի, ու փարիսեցին, ո՛չ ավել, ո՛չ պակաս, կանգնել է Օրենսդրի դեմ, Ով իրեն պատվիրել էր՝ «Թող քո շուրթերը չգովեն քեզ», եւ աղոթում է (իսկ իրականում՝ սեփական անձն է փառաբանում): Ահա թե ինչու էր այս աղոթքն անընդունելի Աստծու համար:

Ընդհանրապես, փարիսեցիները ինչի՞ համար մեղադրվեցին Նոր Կտակարանում, նաեւ այս առակում. առաջին հերթին՝ կեղծավորության համար: Եվ այն էլ ո՞ւմ կողմից. ամենատես Աստծու: Այս

առակում էլ Աստված շատ լավ գիտեր, որ փարիսեցին այն չէր, ինչ որ ուզում էր իրեն ներկայացնել: Նա ուղղակի սուտ էր խոսում, երբ ասում էր, թե ինքը նման չէ շնացողի կամ հափշտակողի: Թերեւս, իր վարքագծով նա շատ վարպետորեն ներկայանում էր մարդկանց՝ իբրեւ առաքինի ու օրինապահ մարդ, սակայն ո՛չ միտքն էր մաքուր, ո՛չ էլ ներքին ցանկություններն էին ազնիվ: Նրա համար շատ ավելի կարեւոր էր իր ցուցադրական օրինապահությունը, քան անկեղծ սրտի մաքուր պաշտամունքը: Ուստի Աստծու առաջ այս աղոթքը ինչեք իբրեւ դատապարտություն՝ հենց աղոթողի համար: Չէ՞ որ Աստված տեսնում է սրտի ամենախորքը, տեսնում է քողարկված մեղքերը՝ «աջակողմյան» կողմած մեղքերը, որոնց մասին այլ առիթով խոսել ենք: Այն մեղքերը, որոնք, որքան էլ նրբորեն քողարկված, սակայն շատ ավելի վտանգավոր են, ավելի կործանարար ու չափազանց նենգ: Սրանցով մինչեւ ուղևուծուծը վարակված էր փարիսեցին: Մարդիկ, թերեւս, միամտաբար մտածում էին՝ փարիսեցին մեր հոգեւոր առաջնորդն է, տեսե՛ք՝ ինչ լավն է, ինչ ազնիվ է, օրինապահ: Բայց... ներսը չէին տեսնում:

Հիմա փորձենք մի պարզ համեմատություն անցկացնել փարիսեցու՝ իբրեւ իրեական միջավայրի հոգեւոր առաջնորդի եւ մեր մայր եկեղեցու սրբերի՝ իբրեւ քրիստոնեության առաջնորդների միջեւ: Նարեկացին իր Մատյանում մերկացնում է մարդկային բոլոր հանցանքները, ոչ մի ծածուկ բան այ-

լեւս չկա, եւ անգամ մտքի ծայրով անցած փոքրիկ մեղքն է որակվում՝ իբրեւ կատարված չարագործություն: Ինքն իրեն համարում է ամենամեղավորը բոլոր մարդկանցից: Քրիստոնեական կյանքի մեջ, մանավանդ հոգեւոր առաջնորդության մեջ յուրաքանչյուր հոգեւորապես հասուն մարդ այսպես պետք է մտածի եւ այսպես պետք է ներկայանա Աստծու եւ մարդկանց առաջ: Ճիշտ այնպես, ինչպես առակի մաքսավորը, որ «Կանգնած էր մեկուսի եւ չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը եւ ասում՝ «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս» (Դուկ. ԺԸ 13):

- Այսինքն՝ կարելի՞ է ասել, որ փարիսեցու պարագայում խաթարված էր աղոթքի հոգին, եւ անգամ կարելու էլ չէ, թե ինչ բաներով էր աղոթում, քանի որ տաճարում՝ Տիրոջ առաջ կանգնած, Աստծուն փառաբանելու փոխարեն ինքն իրեն էր փառաբանում: Եվ, որ շատ կարեւոր է, իսպառ բացակայում էր զոջման, մեղքերի խոստովանության, այդ մեղքերի թողության համար խնդրանքի հանգամանքը, այսինքն՝ չկար ապաշխարություն: Մինչդեռ մաքսավորը միայն մեղա էր մրմնջում գլխահակ...

- Գիտեք, եթե փարիսեցին նույնիսկ իսպառ ազատ լիներ մեղքից, ինչ-որ տեղ, թերեւս, կարելի էր հանդուրժել այն, որ նա զոջման հոգի չունի: Բայց դա ուղղակի անհնար է. Ադամից սկսած որեւէ մեկը չկարողացավ արդար կյանքով ներկայանալ Աստծու առաջ: Միակ անմեղը Հիսուս Քրիստոսն էր, այն էլ՝ մարդացած Աստվածը, որ եկավ բոլոր մեղավորների փրկության պատճառ դառնալու: Հետեւաբար փարիսեցու կեցվածքը (չզոջացող հոգի) միանշանակ հակասում էր աղոթքի հոգեբանությանը: Փոխանակ իր անմիտ անձը բարձրացնելու, նա Աստծուն պիտի փառաբաներ՝ թեկուզ հենց այն շնորհների համար, որ Աստված պարգեւել էր իրեն:

Շարունակությունը՝ էջ 7

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՎ ՀՈՒՆՅԱՆ ՏՈՄԱՐՆԵՐՈՎ

Հայ Առաքելական Եկեղեցին միակն է քրիստոնյա աշխարհում, որ, հավատարիմ հնավանդ ավանդության, Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնը նշում է ոչ թե դեկտեմբերի 25-ին, այլ հունվարի 6-ին: Սակայն աշխարհասփյուռ Հայ Եկեղեցում, առանձին դեպքերում, Հիսուսի ծննդյան ավետիսը տրվում է ոչ թե Նոր՝ Գրիգորյան տոմարով, այլ հին՝ Հուլյան տոմարով, որ համապատասխանում է հունվարի 19-ին: Այսպես է այսօր Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում: 1923 թվականից Նոր տոմարն ընդունած Հայ Եկեղեցին հին տոմարով է Ս. Ծնունդը նշում նաեւ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի եկեղեցիներում: Ո՞րն է մեր Եկեղեցում տոմարական այս տարբերության պատճառը: Ինդիքը, անշուշտ, աստվածաբանական չէ:

Նշենք, որ դեռեւս 1917 թվականից Նոր տոմարին անցնելու հարցը Հայ Եկեղեցում օրակարգային էր, որով զբաղվում էր Ամենայն Հայոց Գեւորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի կարգադրությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովը:

1918 թվականին, սակայն, երբ Նոր տոմարն ընդունում է նաեւ

Հայաստանի առաջին հանրապետությունը, տոմարական խնդրով զբաղվող եկեղեցական հանձնաժողովը որոշում է առժամանակ պահել հին տոմարը, քանի որ ժամանակի պատերազմական-քաղաքական իրավիճակի պատճառով անհնար էր ստանալ եկեղեցական բոլոր հատվածների համաձայնությունը: Եվ միայն 1923 թվականին է, որ Գեւորգ Ե Կաթողիկոսի կոնդակով Հայ Եկեղեցին անցնում է Նոր տոմարի:

Գրիգորյան տոմարի ներմուծումը, սակայն, հայոց մի շարք թեմերում, մասնավորապես Ռուսաստանում եւ Վրաստանում, հանդիպում է լուրջ խոչընդոտների: Բանն այն է, որ Ռուս եւ Վրաց Եկեղեցիները, չնայած Նոր տոմարի անցնելու մասին վաղօրոք արած հայտարարությունների, շատ շուտով հրաժարվում են իրենց մտադրությունից եւ շարունակում են պահպանել հին՝ Հուլյան տոմարը: Ահա այս պատճառով էլ Ռուսաստանի եւ Վրաստանի հայությունը եւ շարունակում է եկեղեցական տոները նշել հին տոմարով: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր Զրիստոսի Հարության տոնին, որ տարբեր տոմարների հաշվարկով օրացույցային տարբեր օրերի կարող էին



հանդիպել: Պահպանելով հին տոմարը՝ ռուսահայ եւ վրացահայ հավատացյալները կամենում էին միանալ նաեւ այդ երկրների ժողովուրդների համընդհանուր ուրախությանը:

Ինչ վերաբերում է Ս. Ծննդյան տոնին, ապա ըստ հին տոմարի՝ Ուղղափառ Եկեղեցիները դեկտեմբերի 25-ի փոխարեն Սբ Ծնունդը կատարում են հունվարի 7-ին, իսկ Հիսուսի Մկրտությունը, ոչ թե Սբ Ծննդյան տոնին, ինչպես Հայ Եկեղեցում է, այլ 12 օր անց՝ հունվարի 19-ին: Հուլյան հաշվարկով՝ այս նույն օրվա հետ է համընկնում նաեւ Հայ Եկեղեցու Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնը: Այս դեպքում եւս ռուսահայ եւ վրացահայ համայնքները, առաջնորդվելով հին տոմարով, միանում էին այդ երկրների հավատացյալների ուրախությանը:

Չնայած 1924 թվականի դեկտեմբերի 10-ին Գեւորգ Ե Կաթողիկոսը կրկին Նոր տոմարին անցնելու պահանջով իր երկրորդ կոնդակն է արձակում, սակայն այս թեմերում իրավիճակը գրեթե չի փոխվում: Ի վերջո ռուսահայ ու վրացահայ համայնքներին արտոնվում է գործածել նաեւ հին տոմարը, որ առ այսօր պահպանվում է այդ թեմերի եկեղեցական մի քանի համայնքներում:

Բացառություն է արվում նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության համար: Ընդառաջելով պատրիարք Եղիշե արք. Դուրյանի դիմումին՝ Գեւորգ Ե Կաթողիկոսը համաձայնում է, որ Տերունական սրբավայրերի նկատմամբ Հույն Ուղղափառ Եկեղեցու հետ ունեցած ընդհանուր իրավասությունների պարագայում, քանի դեռ Հույն Եկեղեցին պահպանում

է հին տոմարը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում եւս նպատակահարմար է հին տոմարի գործածությունը:

1924 թ. դեկտեմբերի 29-ի հայրապետական կոնդակում մասնավորապես ասվում է. «Ի նկատ առեալ մեր յառանձնայնատուկ պայմանս եւ զմիջազային հանգամանս Ս. տեղեացո, որոյ աղագաւ, արդարեւ, անհնարին է այժմէն իսկ ի կիր արկանել զՆոր Տոմար ըստ մտաց Կոնդակի մերոյ, որ ի 11-ն Նոյեմբերի անցելոյ 1923 ամի ընդ համարաւ 349, եւ ըստ ամենայնի հաճ եւ հաւան գտեալ ընդ բացատրութիւն Ամենապատուութեանդ, թոյլ տամք բացառաբար շարունակել ըստ հնոյն միջ համաձայնութիւն փոխադարձ լիցի այդր ընդ մէջ Հայոց, Յունաց եւ Լատինաց վասն Նորոյ Տոմարի»:

Ահա այս պատճառով էլ հունվարի 6-ի փոխարեն Ս. Ծննդյան տոնը Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում եւ որոշ հայ համայնքներում շարունակվում է կատարվել հունվարի 19-ին՝ Նոր տոմարի համեմատ 13 օրվա տարբերությամբ: Տոմարական այս բազմազանությանը Հայ Եկեղեցին այսօր համակերպվել է՝ որտեղ առաջնային է դարձել հարեանների հետ եկեղեցական տոները կատարելու, երկրում տիրող տոնական տրամադրությանը համահունչ լինելու հոգեբանությունը:

Յեղիսե ՄԿՐՏՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)

Արշակ ՄԱՂՈՅԱՆ

ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՐ ՍՈՒՐ ԱՌՆՈՒՅՈՒՆ՝ ՍՐՈՎ ԱՆԿՑԻՆ

Նվիրվում է Հայոց Բանակի 20-ամյա հոբելյանին

Ուր ճաշակել եմ սարսափներ
մահի
Հոգուս խռովքին համակվազ:
Քառասուն հազար մեռյալ
լուսամուտ,
Ակնախոռոչներ անթիվ ու
անվերջ:



Սկիզբը՝ էջ 4
Ես այն հերոսությամբ աչքի է
ընկնում նաեւ հաջորդ դարի առա-
ջին տասնամյակներին, հատկա-
պես ռուս-պարսկական պատե-
րազմին: Եվ երբ Մելիք-Վանին
նրան տեղեկացնում է, թե ռուսա-
կան հրամանատարությունը
պատրաստ է թագավոր-կայսրից
խնդրելու հայ հերոսի ցանկացած
պարգևը, նրան տարօրինակ է
թվում այդ առաջարկը, եւ նա
դարձյալ հրաժարվում է՝ ասելով.
«Վանի՛, իմ ակնկալությունն է
հաղթանակ, իսկ պարգևը՝ ա-
զատ հայրենիք...»:
Էջ 139-145

Նակ արտահայտվում էին սադ-
րանքներով, ասպատակություն-
ներով: Առանձնապես մեծ աղետ-
ներ ու հեղաբեկումներ բերեց
քսաներորդ դարը: 1905-ի հայ-
թաթարական ընդհարումները
միտված էին բնիկ տարրի բնաշ-
նջմանը Հարավային Կովկասում:
1919-ի ամռանը Արցախին տիրե-
լու համար մուսավաթականները
շրջակա գյուղերում ջարդեր կազ-
մակերպեցին: Հաջորդ տարվա
մարտին կոտորեցին տարածաշր-
ջանի հայերին, կողոպտեցին, ա-
վերեցին, հրդեհեցին քաղաքը...
Շուրջ մեկ տասնամյակ անց մե-
ծատաղանդ բանաստեղծ Օսիպ

1921-ին նորակազմ ադրբեյջա-
նական խորհրդային հանրապե-
տությունը թուրք-բուլղարական ավա-
զակապետություններից՝ Նվեր
ստացավ հայկական Արցախն իր
մայրաքաղաքով: Աղաղակող այդ
անարդարությունը տեւեց յոթ տաս-
նամյակ, եւ ժողովրդական վրդով-
մունքը հասավ զագաթնակետին:

Թրքական ավանդական ան-
սանձությունը, որ վայելում էր
նախ ցարական, ապա եւ բուլղե-
կյան իշխանությունների ծալյալ
աջակցությունը, անշուշտ, մի օր
պիտի տեղի տար: Դա պիտի լի-
ներ խորհրդային պետական կա-
ռույցների տկարացման ժամա-
նակ: Եվ վերջապես եկավ այդ ժա-
մանակը:

1991 թ. սեպտեմբերի 2-ի հա-
նրաքվեով արցախահայությունը
տվեց անկախ ու ազատ ապրելու
իր վճիռը, որ, սակայն, թշնամա-
նքով ընդունեցին թե՛ խորհրդային
կայսրության, թե՛ ադրբեյջանա-
կան ղեկավարները, կազմակեր-
պեցին կոտորածներ Բաքու, Գան-
ձակ, Սումգայիթ եւ այլ քաղաքնե-
րում, այնուհետեւ թաթարները
պատերազմ սկսեցին Արցախին
տիրանալու համար:

Եկել էր պատմական պահը:
Սկզբնապես դիմադրությունը
տարերային բնույթ ուներ, բայց
շուտով անհրաժեշտություն
զգացվեց պայքարը կազմակեր-
պելու մասնագիտորեն, ձեւավոր-
վեց ազգային բանակ, թափ ա-
ռավ ազատագրական կռիվը: Դա
հայկական Նոր բանակի առաջին
մկրտությունն էր:

Շուշին՝ հիմնավորց հայկական
ամրոց-քաղաքը, պատուհաս էր
դարձել հայոց բնակավայրերի

համար. հատկապես 1992-ի գար-
նանը հուր ու կրակ էր տեղում
Շոշ, Զարինտակ գյուղերի, Ստե-
փանակերտի վրա: Թշնամին որ-
դեգրել էր «խանձված հողի» մար-
տավարություն, եւ կռիվը գնալով
թեժանում էր: Հասունացել էր Շու-
շիի ազատագրության խնդիրը, ո-
րի կատարումը հանձնարարվեց
գնդապետ Արկադի Տեր-Թադեոս-
յանին:

1992 թ. ապրիլին մարտա-
կան ծրագրի օրանի մոտ էին
խորհրդային բանակի գնդապետ
Արկադի Տեր-Թադեոսյանն ու
գեներալ-մայոր Գուրգեն Դալի-
բալթյանը: Սկսվեց գրոհի նա-
խապատրաստությունը. կազմ-
վեց քաղաքի մանրակերտը, եւ
հրամանատարական կազմը
«տեղանքի» ուսումնասիրու-
թյամբ հանգամանորեն մշակեց
հետագա գործողությունների
քայլերը... Հայկական ուժերը՝
շուրջ 2500 հոգի, թվով շատ էին
գիշերում քաղաքը վերահսկող հա-
կառակորդին: Կազմավորվեց
չորս գումարտակ, մեկը Սեյրան
Օհանյանի զխավորությամբ
հյուսիս-արեւմուտքից փակելու
էր օգնության ճանապարհը՝ ա-
պահովելով գրոհի թիկունքը:
Հարձակման զխավոր ուղղու-
թյունը հյուսիսայինն էր, որ
հանձնարարված էր Վալերի
Զիրյանի գումարտակին: Արե-
ւելքից գրոհելու էր Արկադի Կա-
րապետյանը, իսկ հարավից՝
Սամվել Բաբայանի եւ Վալերի
Բալայանի գումարտակը: Ժի-
րայր Սեֆիլյանի ջոկատը խճու-

ղին էր պաշտպանելու հակառա-
կորդի հարձակումից: Արեւմ-
տյան ուղղությամբ նախատես-
վեց միջանցք՝ փախստականնե-
րի համար: Մանրամասնորեն
քննարկվեցին բոլոր հանգա-
մանքները:

Մայիսի 8-ի գիշերը պաշտ-
պանության խորհուրդը որոշեց
լռեցնել Ստեփանակերտի շր-
ջակա կրակակետերը, հատկա-
պես՝ Շուշին եւ Աղդամը: Պար-
գեւ արքեպիսկոպոս Մարտիրո-
սյանը օրինությամբ ողջերթ
մաղթեց ինքնապաշտպանա-
կան շտաբի անդամներին, եւ
լույս 9-ի գիշերը, ժամը 2.30-ին
հրասայլերն ու հետեւակային-
ները միաժամանակ շարժվեցին
դեպի նպատակակետ: Սկսվեց
վճռական գրոհը, որ փոթորիկ
էր հիշեցնում: Հանկարծակիի
եկած թշնամին դիմադրության
կարճատեւ ու անհաջող փոր-
ձից հետո շտապեց օգտվել
տրամադրված մարդասիրա-
կան միջանցքից եւ հեռանալ՝
ավար թողնելով հեքիաթային
քանակությամբ զենք ու զինամ-
թերք: Իսկ քաղաքը հուսալի-
որեն պաշտպանված էր ական-
ների անսովոր խիտ ցանցով.
դիրքերը լքելիս թշնամին
չհասցրեց ոչնչացնել զինամ-
թերքը, քաղաքը:

Մայիսի 9-ի արշալույսին բաց-
վեց Նոր առավոտը. Շուշի հայա-
քաղաքը հանձնվեց իրավատերե-
րին: Եվ հայ քաջորդին սուրը պա-
տյան դրեց:
Էջ 151-156



ՇՈՒՇԻ ՆՈՐ ԱՌԱՎՈՏԷ

Հայոց բարձրագույն Շուշի բեր-
դաքաղաքը միշտ գալթակու-
թյան վեմ է եղել թշնամական ու-
ժերի համար: Թրքալեզու վաչկա-
տուն ցեղերի զավթողական նկր-
տումները ժամանակ առ ժամա-

Մանդելշտամը նողկանք էր ապ-
րելու՝ Շուշիում տեսնելով թա-
թարների վանդալիզմի չսպիա-
ցած հետքերը եւ վկայելու էր
պատմության համար.

Ես Ղարաբաղն եմ հիշում
լեռնային,
Գազանբարո՝ Շուշի քաղաք,

Վերածվեց Ախալցխի Փոֆր Պամաճ գյուղի Սբ Խաչ եկեղեցին



Դեկտեմբերի 25-ին, ձե-
ռամբ Վիրահայոց քեմի ա-
ռաջնորդ Վազգեն եպս Միր-
զախանյանի եւ մասնակցու-
թյամբ Սամցխե-Ջավախքի
ընդհանուր առաջնորդական
փոխանորդ Բաբկեն արքեպ-
Սալբյանի, Թբիլիսիի առաջ-
նորդանիստ Սբ Գեորգ եկե-
ղեցու հոգեւոր հովիվ Հակոբ
արքեպ Սահակյանի եւ Ախալ-
ցխի շրջանի հայկական
գյուղերի հոգեւոր հովիվ Մով-

սես քին. Մանուկյանի, վե-
րածվեց Ախալցխի շրջանի
Փոքր Պամաճ գյուղի 19-րդ
դարի սկզբին կառուցված Սբ
Խաչ եկեղեցին:

Փոքր Պամաճ գյուղը հիմ-
նադրվել է 1829 թվականին՝ Ա-
րեւմտյան Հայաստանի Թուր-
գոմ գավառից եւ Կարին գա-
վառի Գառն գյուղից վերաբ-
նակեցված հայորդիների կող-
մից՝ Կարապետ արք. Բագրա-
տունու առաջնորդությամբ:

1881 թվականին գյուղում
բացվել է ծխական դպրոց, որը
գործել է մինչեւ 1932 թվակա-
նը, որից հետո այն դարձել է
պետական տարրական կրթո-
ւթյան:

Եկեղեցին իր գործունեու-
թյան տարիներին համախմ-
բել է ժողովրդին եւ հոգեւոր
սպասավորների միջոցով հո-
գացել տեղի բնակչության ու-
սումնառության ու հոգեւոր
կրթության մասին: Սակայն
խորհրդային տարիներին ե-
կեղեցին փակվել է եւ վերած-
վել պահեստի:

1993 թվականին, տեղի
բնակիչ Հովհաննես Մանու-
կյանի նախաձեռնությամբ, ե-
կեղեցին նորոգվել է եւ 1995
թվականից սկսել է գործել:
Սակայն տարիների ընթաց-
քում եկեղեցին հիմնանորոգ-
ման կարիք ուներ, եւ այդ բա-
րի առաքելությունն ստանձնե-
ցին արմատներով փոքրպա-
մաճի Անդրանիկ եւ Խաչա-
տուր Բաբոյանները եւ Ռուբեն
Սահակյանը:

Եկեղեցու վերածման սր-
բազան արարողության ա-
վարտին անմիջապես հաջոր-



դեց Պատարագի մատուցու-
մը: Պատարագից հետո քե-
մակալ առաջնորդը շնորհա-
վորեց ազգաբնակչությանը,
խոսեց եկեղեցու ինչպես հո-
գեւոր, այնպես էլ ազգային
դերակատարության կարեու-
թյան մասին եւ բարձր
գնահատելով երիտասարդ
բարերարների նվիրական
աշխատանքը՝ նրանց փո-
խանցեց հուշանվերներ եւ
օրհնության գիր:

Հոգեւոր հովվության նվի-
րական ծառայության հա-
մար սրբազան հայրը գովա-
բանեց նաեւ Մովսես քահա-
նայի ծառայությունը եւ իբ-
րեւ գնահատանք՝ նվիրեց
մանրանկարչության գեղե-
ցիկ պատկեր:

Միջոցառման ավարտին
տեղի ունեցավ մատաղի օրի-
նություն, այնուհետեւ օրը վե-
րածվեց համընդհանուր տո-
նախմբության:

ՄԵՐ ԵԿԵՂԵՃՈՒ ՎԿԱՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵԱ ՄԱՆՈՒԿ ԽԼԱԹԵՑԻ

Այս պատվավոր ու պանծալի Յովհաննես վկան Բզնունյաց գավառից էր՝ Խլաթ քաղաքից՝ բարեպաշտ ծնողների գավակ։ Զայոց ԸՃՁԶ (1438) թվականն էր։ Նա սովորել էր գուսանական խաղերի երաժշտական արվեստը, շատ ասուշաձայն էր ու քաղցրերգեցիկ, այնքան, որ տեսնողներն ու լսողները զարմանում էին։ Սիրված էր բոլորի աչքում, առավել էս՝ Սեֆեդին ամիրայի, հանապազ նրա մոտ էր։

Նույն ամիրայի մոտ կար եւ մի երգող ու պարող կին, եւ այդ պիղծ կինը հանրության աչքի առաջ գուսանական մրցությանը պարտվել էր երիտասարդից, որովհետեւ Յովհաննես Մանուկը կատարում էր գեղեցիկ եղանակով երգեր՝ «Փառք ի բարձունս» եւ այլ քաղցրաբարբառ շարականներ ու զարմացնում էր բոլորին։ Իսկ մարերի նենգ ազգը, որ եւ քուրդ եւ կոչում, ամիրային դրդեց կործանել նրան։

Եվ մի օր ամիրան նրան կանչեց իր ամրոցը եւ ասաց. «Ես ստուգել եմ, որ դու մեղքով երբեմն եղել ես մահմեդական երգչուհու հետ. դու պարտավոր ես տաճկանալ եւ նրան առնել կամ մեռնել չարաչար մահով»։

Քրիստոսի ծառա Յովհաննեսը համարձակորեն պատասխանեց. «Դա ձեր եւ ձեր առաջնորդների գործն է եւ հեռու է քրիստոնյաներիցս, որ Քրիստոսի ծառա ենք, չէ՞ որ Քրիստոսը սուրբ է եւ սիրում է սրբերին»։

Այնժամ անօրենը լցվեց զայրույթով եւ չորս հոգու հրամայեց բերդի աշտարակից վայր նետել նրան, բայց չկարողացան, որովհետեւ սուրբն Աստծու աներեւույթ օգնությամբ հաղթեց նրանց։ Եվ նրանք դառն ու խիստ գանահարությամբ բրածոն արեցին վկային եւ ոտը եւ ձեռք կապած՝ բանտ նետեցին, իսկ գիշերը ողորցելով, պատիվ խոստանալով՝ թուլացրին նրա հավատը։ Եվ նա ասաց. «Ամբողջության ձեր կամքը կլինի»՝ վախենալով, թե գիշերով թաքնաբար

կսպանեն իրեն։

«Ամբողջության նրան տարան ամիրայի մոտ, բռնի ձի նստեցրին ու շրջեցրին քաղաքով մեկ։ Եվ քանի որ նա քսանամյա երիտասարդ էր եւ դուրսափոխ ամեն խոսքով, ուստի նույն օրը զոջաց, [իրաժարվեց] պիղծ օրենքից, որ նրան պարտադրում էին անօրենները. զոջալով՝ միտք էր անում մեռնել հանուն Քրիստոսի։ Եվ քրիստոնյաներից մեկին ուղարկեց քահանաների մոտ, թե՛ «Ինձ հաղորդություն տվեք Քրիստոսի մարմնից, որ վաղը նահատակվեմ Նրա անվան համար»։ Քահանաները ուշադրության չառան՝ նրան համարելով անհավատ եւ ուրացող։ Բայց նա հալվում-մաշվում էր իր մեջ եւ սրտի դառնությունից մտքում հորինում էր լալազին երգեր եւ ողբալով ու ամոթխածությամբ շրջում էր քաղաքում՝ առանց գոտու եւ մի ձորձով, վայ ու եղուկ էր կարդում իր անձին ու ասում. «Վա՛յ քեզ, ուրացող Յովհաննես, որ տրտմեցրիր քահանաներին, իսկ ծնողներիդ սուգի մեջ նստեցրիր եւ քո սիրելի եղբայրներին ու ընկերներին դառնացրիր, մոռացար այն գավազանը, որ քեզ Աստծու որդի ծնեց. թողիր Ավետարանը, որ քարոզության քեզ լուսավորեց, Քրիստոսի աչքից ընկար, հեռացավ քեզանից պահապան իրեշտակը։ Եվ արդ, դատաստանի օրը ի՞նչ պատասխան կտաս Քրիստոսին՝ քո Աստծուն, որ ասաց սուրբ Ավետարանում՝ «Ով ինձ ուրանա մարդկանց առջեւ, ես եւս կուրանամ նրան Իմ Զոր առջեւ, որ երկնքում է»։

Այս եւ սրանից առավել ողբեր հորինեց, լալիս էր անդադար եւ լողների արտասուքն էր շարժում։ Այնուհետեւ վաճառեց իր ամբողջ ունեցվածքը, բաժանեց աղքատներին ու կարոտյալներին։ Եվ գնաց եկեղեցու առաջ, դավանեց ամենասուրբ Երրորդությունն ու Քրիստոսի մարդեղությունը, եւ ողբալով ու կոծելով մեղա եկավ բոլոր քահանաների առջեւ, ցույց տվեց իր գերեզմանի տեղը սուրբ

սեղանի մոտ եւ ասաց. «Այստեղ կթաղեք ինձ», ապա ինքն իրեն Աստծուն ու սուրբ եկեղեցուն հանձնեց եւ պատրաստվեց ամենայն սրբությամբ, երբ Առաջավորի պահքը հասավ, հինգ օր առանց ուտելու անցկացրեց։

Նրա մոտ եկան երկու այր՝ անօրենների գլխավորներից, ու ասացին. «Արի գնանք մեր աղոթանոցը, ուտենք եւ ըմպենք միասին, իսկ եթե ոչ՝ կմեռնես մեր ձեռքով»։ Եվ նա պատասխանեց. «Սուրբ հըտըրին եմ խոստացել այսքան օրերս եւ չեմ կարող գալ»։



Նրանք չարութեամբ լցված գնում են դատավորի մոտ եւ նրա մասին ասում. «Ճշմարիտ քրիստոնյա է, խաբեց մեզ եւ մեր օրենքը»։ Եվ նա ասաց. «Լուռ մնացեք մինչեւ նրա պահքը, եւ այդ օրը կթափատենք նրան, իսկ թե չկամենա՝ չարաչար մահով կորցրեք նրան»։

Եվ լռեցին մինչեւ Բուն բարեկենդանի շաբաթվա վերջին օրը. այդ օրը գնացին բռնեցին նրան ու ծեծելով տարան։ Ծնողները տեսան. աղիողորմ ողբուկով գնում էին նրա ետեւից։ Իսկ նա ասաց ծնողներին. «Աստվածագութ ծնողներ իմ, մի՛ լաք իմ մահվան համար, այլ լացեք իմ կորստի համար։ Բայց աղաչում եմ ձեզ, ձեր կրած չարչարանքը բաշխեցեք ինձ, օրհնեցեք ինձ, որովհետեւ ես այսօր Քրիստոսի վկա եմ լինելու՝ Զակոբի նման»։

Եվ ծնողները տարածեցին իրենց թեւերը, խաչակնքելով օրհնեցին նրան ու ասացին. «Չորացնողն Աստված թող զորացնի քեզ. գնա՛ խաղաղությամբ, եւ Քրիստոսն Ինքը լինի քեզ հետ»։

Եվ անօրենները նրան տարան դատավորի մոտ, իսկ սրանք կրկին հղեցին ամիրային, թե «նորից ուրացրեք ու թլփատեցեք դրան»։

Երբ հասան բերդի դարպասին, Յովհաննեսը կանգ առավ ու ասաց. «Ո՛րք եք ուզում ինձ տանել. այստեղ եմ հեծնել սատանայի ձին եւ ուրացել Քրիստոսին եւ այստեղ եմ մեռնելու»։ Եվ աչքերը վեր բարձրացրեց, հոգու աչքերով տեսավ Քրիստոսին, որ բազում հրեշտակներով ու մարտիրոսների խմբերով եկավ, անթառամ պսակ բերեց իրեն եւ քաջալերելով զորացնում էր մարտի մեջ, խոստանում լուսեղեն օթեաններ։ Դրանով պայծառացավ նրա երեսի գեղեցկությունը, եւ ձեռքերը երկինք պարզած աղաղակեց՝ ասելով. «Հավատում եմ իմ Քրիստոս Աստծուն, երկնքի ու երկրի արարչին», եւ նրանց ձեռքերից ազատվեց, ընկավ գետին եւ հողը խաչակնքելով բերանն էր առնում ու ասում. «Այստեղ սպանեցեք ինձ հանուն Քրիստոսի»։

Այնժամ անօրենները հարձակվեցին նրա վրա կատաղի շան նման, քարով ու փայտով հարվածում էին նրա գլխին, մինչեւ որ ուղեղը վայր թափվեց գլխից, եւ նա ընկավ նրանց մեջ մեռածի նման, եւ շատերն ասացին՝ մեռավ։ Բայց նա հանկարծակի ուշքի եկավ, իր արյունով օծեց երեսը, ասաց. «Ահա բաժա՛կն անապական, որ ըմպեցի, եւ մա՛հը պատվական, որ այսօր ինձ վիճակվեց»։

Եվ անօրեններն ասում են. «Մի՛ երկնջիր, մի՛ խոսիր, եւ մենք դեղերով կկենդանացնենք քեզ»։ Իսկ նա վերստին դավանեց Քրիստոս Աստծուն եւ կրկին խաչով դրոշմելով հողը՝ բերանն էր առնում, ձեռքով խաչակնքելով սիրտը՝ բարձրաձայն գոչում էր. «Խփեցե՛ք ինձ եւ սպանեցե՛ք, որովհետեւ Քրիստոսի ծառա եմ»։

Եվ անօրենները տեսան քաջ նահատակի համբերությունը, թողին նրան ու գնացին դատավորի մոտ, ասացին. «Այն խաբեբան չի դադարում Քրիստոսին Աստված դավանելուց»։ Իսկ դատավորն ա-

սում է. «Ինչո՞ւ չեք սպանում նրան»։ Պատասխանում են. «Սպանեցինք նրան, բայց նա նորից կենդանացավ»։ Եվ դատավորը հրամայեց գնալ արկոխել նրան։ Բայց սրանք գնացին, ողորքելով խրատում էին նրան՝ կատարել դատավորի կամքը։ Իսկ նա ասաց. «Գնանք դատավորի մոտ»։

Ուրախացան նրանք, տարան դատավորի մոտ։ Իսկ Քրիստոսի զորեղ զինվորը եւ քաջ մենամարտիկը, մարմնի ցավը թողած, եկավ այնտեղ, որ ուրացության ձին էր հեծնել եւ ձայնեց մոտակա քրիստոնյաներին. «Այստեղ հեծա սեւ ձին եւ այստեղ կմեռնեմ հանուն Քրիստոսի»։

Անօրենները տեսան նրա ճշմարիտ հավատը, քարով ու փայտով հարվածելով ջարդեցին նրա ամբողջ մարմինը։ Եվ այդպես նա ավանդեց իր հոգին առ Աստված՝ հրեշտակների ձեռքով։ Եվ անօրենները երանելի պարմանի մարմինն առան ու այրեցին հրով։

Եվ այն գիշեր նրա վրա լույս ծագեց, եւ անօրենները ամոթով գլխիկոր եղան։ Երեք օր անց ամիրան հրամայեց վերցնել ու թաղել նրա մնացած նշխարները։ Իսկ քրիստոնյաները, որ անօրենների ահից փախել էին, հավաքվեցին, նրա բարեպաշտ ծնողների հետ եկան այնտեղ, եւ ծնողները սգո հանդերձը հանեցին ու սպիտակ հագան, եւ մեծ օրհնությամբ Աստծուն գոհություն էին տալիս ու ասում. «Այսօր մեզ հետ ուրախացեք բոլորը, քանի որ մեր այս զավակի խնդության հարսանիքն է»։ Տնծացե՛ք, քահանաներ եւ ժողովուրդ, որովհետեւ մեր որդյակը հոգեւոր բաժակն ըմպեց, մենք ըմպենք մարմնավոր բաժակը եւ ուրախանալու։ Եվ սաստում էին՝ ուղբեր լալիս էին ու սփոփում լացողներին։ Եվ առնելով նրա մնացած նշխարները՝ Ստեփանոս սրբազան եպիսկոպոսը, քահանաների ու ժողովրդի ամբողջ բազմությամբ, օրհնեց Աստծուն, որ այդ ձմեռնացյալ ժամանակին վարդ փթեցրեց անուշ հոտով։ Եվ տարան գետեղեցին եկեղեցու բեմի ներքո, ուր ինքը ցույց էր տվել՝ սաղմոսելով ու օրհնությամբ ի փառս Արարչի։

Վախճանվեց սուրբ վկան Քրիստոսի փետրվար ամսի 22-ին՝ 130 հայրապետների տոնին։

Նունե ԽՈՐԴԱՎԵՐԴՅԱՆ

ԿԻՑ սեմյակում

Սկիզբը՝ էջ 5

- Բայց մի՞թե միայն շնորհների համար պիտի գոհանալ Աստծուց, մի՞թե միայն պարգևների համար պիտի փառաբանել...

- Ո՛չ եւ ո՛չ։ Աղոթքի իսկական հոգին նաեւ այն է, որ անգամ ներդրության մեջ են գոհանում Աստծուց։ Տիրոջ փառաբանությամբ պիտի սկսվեն եւ եզրափակվեն մեր բոլոր աղոթքները։ «Զայր մեր»-ը՝ աղոթքների աղոթքը, որ սովորեցրեց Ինքը՝ Քրիստոսը, մեզ հենց այդպես էլ ուսուցանում է. «Զա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Զո, եկեսցէ արքայութիւն Զո...», այսինքն՝ Աստծո փառաբանությամբ է սկսվում։ Եվ եզրափակվում է. «Զի Զո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յափտեանս. ամեն»՝ դարձյալ փառաբանություն։ Աստծո առաջ ներկայանալիս մենք պարտավոր ենք մեր սրտում եւ շուրթերին նախ եւ առաջ փառաբանություն ունենալ։ Գիտե՛ք ինչու. որովհետեւ Աստված իրականում փառավոր է, փառքերի Տերն է։ Եվ եթե մենք առանց փառավորելու ենք մոտենում Փառավորյալին, նշանակում է՝ մենք չենք ճանաչում Աստծուն, նշանակում է՝ խեղաթյուրում ենք ճշմարտությունը։ Ուրեմն, նախ պետք է, ինչպես Ավետարանն է ա-

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՎՆԵՐ «ԾԱՐԻՍԵՃՈՒ ԵՎ ՄԱՔԱՎՈՐԻ ՎՈՎԿԸ»

սում, Աստծունը Աստծուն տալ, նոր միայն մնացյալը՝ խնդրանք, աղերս, աղաչանք։ Եվ այս ամենը՝ խոնարհ սրտով ու մեր մեղքերի համար անկեղծ զոջումով։

- Այս առակով մեր Տերը նաեւ խոնարհության դաս է տալիս բոլորիս՝ ասելով. «Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. ԺԸ 14)։ Փարիսեցու աղոթքը շատ հեռու էր խոնարհությունից...

- Այո՛, փարիսեցու աղոթքի մեջ ուղղակի չկար խոնարհություն։ Այլապես, ինչպես արդեն ասացինք, նախ պիտի փառաբանել Աստծուն, ապա իր մեղավոր անձի համար թողություն պիտի խնդրեր եւ վերջում դարձյալ Աստծուն պիտի փառաբաներ, որ իր պես անարժան մարդուն պահում է Իր սուրբ շնորհի մեջ։ Քրիստոսն ասաց. «Սովորեցե՛ք Ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մատթ. ԺԿ 29)։ Քրիստոսը, փառքերի Տերն ու Տիրակալը լինելով, երբ մարդացավ, մարդկայնորեն աղոթեց եւ աղոթքի մեջ փառաբանությամբ մոտեցավ Աստծուն՝ Զորը, եւ ապա խնդրանքով, այն դեպքում, երբ Ինքն Աստված է՝ Որդին Աստծո, եւ խնդ-

րանքի կարիք չունեք։ Սակայն իբրեւ մարդ՝ Ինքը ներկայանում է փառաբանությամբ, ներկայանում է խոնարհաբար ու խնդրանքով եւ ճիշտ նույն հոգեւոր կեցվածքն է պահանջում նաեւ Իր հետեւորդներից։ Եվ այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի առակի մաքսավորի աղոթքը։ Առաքելափման եկեղեցիների ծիսակարգում մեծագույն տեղը զբաղեցնում է աղոթքի հենց այս տեսակը՝ «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս», «Տե՛ր, ողորմեա՛, Տե՛ր, ողորմեա՛»... Պատահական չէ, որ երբ քրիստոնեության հակառակորդները, հատկապես համայնավար անաստվածները հարձակվում էին սրբությունների վրա՝ ցանկանալով անարգել դրանք եւ մարդկանց մեջ հակադրություն, թշնամություն սերմանել սրբությունների հանդեպ, առաջին հերթին «Տե՛ր, ողորմեա՛»՝ աղոթքի վրա էին հարձակվում եւ այն ներկայացնում իբրեւ մի ստորացուցիչ մոտեցում, մարդու արժանապատվությունը վիրավորող երեւույթ։ Սա հենց իսկական դիվային մոտեցում էր։ Եվ տեսե՛ք, թե հոգեբանորեն որքան նման է այդ մոտեցումը փարիսեցու աղոթքին։ Սրան հա-

կառակ՝ մաքսավորը կուրծքն էր ծեծում եւ մրմնջում «Տե՛ր, ողորմեա՛՝ մեղավորիս»...

Մեր եկեղեցու ապաշխարության օրերի կանոններում հստակորեն սահմանված է աղոթելիս 3 անգամ, 12 անգամ, 50 անգամ, 100 անգամ արտասանել «Տե՛ր, ողորմեա՛»-ն, եւ այս աղոթքով լեցուն է մեր ողջ ծիսակարգը։ Սա այն աղոթքն է, որ եկեղեցին հատկապես դնում է իր բոլոր հավատացյալների շուրթերին։ Ու եթե մյուս աղոթքները հիմնականում ընթերցում է քահանան, ապա այս աղոթքը՝ քահանան եւ ժողովրդի ամբողջ բազմությունը միասին։ Սա չափազանց կարեւոր է. մայր եկեղեցին ճիշտ կեցվածքով է ներկայանում Աստծո առաջ։ Եվ դարձյալ պատահական չէ, որ մերօրյա աղանդավորներն էլ հաճախ եկեղեցու հենց ծեսն են ընտրում իբրեւ իրենց հարձակման թիրախ՝ փորձելով պախարակել սրբազան արարողությունը՝ չհասկանալով, թե ինչ անմահ գանձի դեմ են հանդես գալիս։ Հավատացե՛ք, եթե սրբազան ծեսը մեզ չա-



առաջնորդի, մենք շատ արագ կարող ենք հայտնվել փարիսեցու կեցվածքի մեջ։ Շատ կուզենայի աղանդավորների ուղկաններում հայտնվածների ուշադրությունը հրավիրել իրենց քարոզիչների խոսքերին. դժվար է պիտի լինի տեսնել, որ այդ քարոզների մեջ ակնհայտ փառաբանություն կա իրենց իսկ անձին։ Դրանք իսկական փարիսեցիական քարոզներ են, որոնցով իրենց գործն առաջ են տանում կեղծավորությամբ, Աստծո ճշմարիտ խոսքը, մարդկանց հոգիները խեղդում...

Շարունակելի

Յուրբնկալեց

Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ԻՌԽԱՆ ԸՆԽՈՎՍԿՈՅ ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ԱՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչու է այնպես պատահում, որ մարդը, ում ստեղծել է Աստված, չի հավատում Նրան... Միայն մի՛ պատճառ կա, որ մարդիկ ծածկում են իրենց Աստծուց:

Ռուս փիլիսոփա Վլադիմիր Սոլովյեվը իրավացի է, երբ ասում է, թե գոյություն ունի «ազնիվ» եւ «անազնիվ» անհավատություն:

Անազնիվները չեն ցանկանում, որ Աստված լինի, նրանք խուսափում են Աստծի մասին ուզածո մտքից, թաքնվում են սուրբ աշխարհի բարոյական օրենքներից: Չար եւ եսասեր մարդկանց ձեռնադրում է, որ Աստված չլինի: Աստծի գոյությունը, ինչն ըստ էության՝ նրանց փրկությունն է, ներկայանում է նրանց որպես Ահեղ Դատաստան, որը դատելու է նրանց անմաքուր եւ անիմաստ կյանքը: Նման անհավատների շրջանում կան մարդիկ, որոնք ոչ միայն մերժում են Աստծուն, այլեւ լքված են Արարչի հանդեպ ատելությամբ, մի բան, որն անշուշտ

ԻՆՉՈՒ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ

պատճառ է հորինում, որ չճաշակի կյանքի Աղբյուրից: Մարդիկ հրաժարվում են կյանքի ամենազիջվածքի՝ Արարչի հետ մերձ լինելուց:

Իրենց կենցաղային գործերի, հոգսերի, ուրախության ու տխրության մեջ ընկղմված՝ նրանք չեն ցանկանում իրենց կյանքը բարձրացնել դրանցից վեր՝ դեպի հավիտենական ճշմարտությունը:

Աստծի ճշմարտությունը մերժողները (կամ այն դեռեւս չճանաչողները) ընկնում են տարբեր կուսակցական, դասակարգային, ցեղային, ազգային եւ այլ կարգի անձնական ու հասարակական, մեկը մյուսին հակասող եսասիրական «ճշմարտությունների» մեջ: Նրանք իրենց ճշմարտությունների հետեւում եւ դրանցից վեր չեն տեսնում Աստծի միակ ճշմարտությունը:

Շատերն այդպես ապրում ու չեն հասկանում, որ մարդկության ողջ պատմությունը՝ իր պատերազմներով, խռովություններով,

կան կյանքն անհրաժեշտ է ամենքին՝ անկախ նրանց սոցիալական դիրքից...

Իսկ հավատացյալների եւ Եկեղեցու սպասավորների բարոյական թուլության փաստարկները հիմքեր ունեն: Բացորոշ ասենք՝ մենք հավատացյալներս ու հոգեւորականներս, ոչ միշտ ենք լինում Աստծուն ծառայելու մեր սրբազան բարձունքում: Միայն հակակրոնականները, որոնք պախարակում են մեզ, չեն նկատում, որ այդ փաստարկը բնավ էլ հակակրոնական չէ, այլ բուն կրոնական: Այդ բարոյական փաստարկն ամենեւին էլ կապ չունի մատերիալիզմի հետ... Բոլոր ժամանակներում էլ եղել են, այսօր եւս քիչ չեն միայն արտաքուստ «Աստծուն հավատացողներ» եւ «քրիստոնյաներ»: Եվ մի՞թե այս կամ այն մարդկանց կամ հոգեւոր հովիվների բարոյական թուլությունը կարող է վարկաբեկել Աստծի իրեշտակային ուսմունքի կենսական ուժը, իմաստությունն ու լույսը:

Ավետարանն ինքն է մեզ ասում, որ Նույնիսկ Զրիստոսին մտերիմ տասներկու առաքյալների մեջ, պարզվեց, մեկը դավաճան էր: Դա չի կարող հերքել Զրիստոսի ճշմարտությունը, հակառակը, ավելի ընդգծում է այն: Մենք՝ քրիստոնյաներս, վատն ենք թե լավը, դա առնչվում է միայն մեր փրկությանը, բայց ոչ Աստծի գոյությանը:

Խաբեբաներն ու հանցագործները խեղում են միայն իրենց անձերը, բայց ոչ Աստծի ճշմարտությունը... Մարդկային ոչ մի երեսպաշտություն չի գործում չէ խամբեցնելու Աստծի համաշխարհային ճշմարտությունը: «Աստծի ճշմարտության գոյությունը հավիտենական է»: Քիչ չեն եղել եւ այսօր էլ կան մարդիկ, որոնք Զրիստոսի ճշմարտությունն իրենց կյանքից առավել են սիրում:

Անկեղծ անհավատությունը թովմաս առաքյալի անհավատությունն էր: Թեպետ նա գուր դրսեւորեց անվստահություն առաքյալների խոսքերի հանդեպ (նա պետք է, որ հավատար նրանց), սակայն, վստահ լինելու համար ցանկացավ տեսնել հարություն առած Զրիստոսին. ուրախությունից նա կարծես վախենում էր հավատալ...

Եթե Զրիստոսը հարություն է առել, այնքան եւ նրա՝ Թովմասի կյանքը պիտի արմատապես փոխվեր, պիտի գնար միանգամայն այլ ուղիով... Ամեն ինչ նրա կյանքում պետք է փայլատակեր այդ լույսով... Եվ երբ Թովմասը տեսավ իսկապես հարություն առած Զրիստոսին եւ իր ձեռքերով հպվեց Նրա՝ գամերից առաջացած վերքերին, իրձվագին ձայնեց. «Տե՛ր իմ եւ Աստված՝ իմ»: Եվ Զրիստոսը նրան ասաց. «Որովհետեւ դու ինձ տեսար, հավատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսնելու եւ սակայն կհավատան» (Յովհ. Ի 29):

Աշխարհում բոլոր ազգերի մեջ էլ քիչ չեն նման մարդիկ: Նախապորոշություն չունենալով տեսնելու Զրիստոսին ֆիզիկական աչքերով՝ նրանք առանց երկմտանքի իրենց հոգու աչքերով են տեսնում Փրկչին, տեսնում են՝ սիրով ու հավատով առնեցին:

Անկեղծ կասկածամտությունն ի վերջո գտնում է ճշմարտությունը, որովհետեւ փնտրում է Նրան՝ առանց խարդավանքի:

Վերջիններս, որոնք ճշմարտության ծարավն ունեն, արդեն գտել են Աստծուն, քանզի այդ ծարավը հենց Աստծի ճշմարտությունն է մարդկանց կյանքում:

Թարգմանությունը՝
Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ

Սը Ծննդյան եւ Աստվածհայտնության տոներ Ժնեւի Սը Հակոբ Եկեղեցում

Հունվարի 6-ին աշխարհափյուռ հայությունը տոնախմբեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Զրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության իրաշափառ տոնը: Նախորդ օրը՝ հունվարի 5-ին, Ժնեւի Սը Հակոբ Եկեղեցում մատուցվեց ճրագալույցի Պատարագ: Պատարագին էր Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Մեսրոպ վրդ. Պարսամյանը:

Հայր սուրբը նշեց, որ համընդհանուր խաղաղությունը, որ սկսվում է անհատի ներքին հոգեւոր խաղաղությունից, կարող է իրականություն դառնալ այն ժամանակ միայն, երբ հետեւում ենք առաքելական պատգամին, այն է՝ չենք մտահոգվում եւ չենք վախենում աշխարհային որեւէ իրականությունից, աղոթում եւ գոհություն ենք մատուցում Աստծուն՝ կյանքի բոլոր հանգամանքներում:





Մեծ էր տոնական խանդավառությունը Սը Հակոբ Եկեղեցում: Պատարագից Մեսրոպ վրդ. Պարսամյանը «Հայր մեր»-ից առաջ ներկա հավատացյալներին ուղղեց իր պատգամը տոնի առիթով եւ ավետեց խաղաղության Իշխանի ծնունդը: Նա հորդորեց հավատացյալներին իրենց հոգիներում փառաբանակից լինել ավետաբեր իրեշտակներին. «Փառք Աստծուն բարձունքներում, խաղաղություն երկրի վրա, եւ հաճություն մարդկանց մեջ»:

քի բոլոր հանգամանքներում, խորհում ենք ճշմարիտը, ազնիվը, առաքինին, եւ այդքան «Աստծու խաղաղութիւնը, որ վեր է քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Զրիստոս Հիսուսով» (Փիլիպ. Դ 7):

Պատարագի ավարտից հետո հայր սուրբը կատարեց ջրօրհնեքի արարողություն՝ որպէս Զրիստոսի մկրտության խորհրդանշան: Օրհնված ջուրը վերջում բաժանվեց ներկա հավատացյալ հայորդիներին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ.

«ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՅՈՐԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ»



Սուրբծննդյան տոների Նախօրեին, Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս Եպս Ներսիսյանի օրհնությամբ, Աստրախանի Սը Հռիփսիմ Եկեղեցին, Տ. Խաղքին. Ղազարյանի Նախաձեռնությամբ, հրատարակել է «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու յոթ խորհուրդները» գիրքը:

Աստրախանի երեմնի հայաշատ համայնքում վերջին անգամ հայերենով հրատարակվել է 1920-ի Եկեղեցական օրացույցը (1919-ին):

«Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու յոթ խորհուրդները» գիրքը տպագրվել է աստրախանաբնակ Արթուր Խաչատրյանի եւ Կարեն Գրիգորյանի մեկենասությամբ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Փրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սը Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
18.01.2012 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ